



Գ Լ Ո Բ Ո Ի Մ

Վ Ե Ր Լ Ո Ի Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

---

---

ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

8

Դեկտեմբեր, 2006

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# Գ Լ Ո Ւ Բ Ո Ւ Մ

Վերլուծական տեղեկագիր

# Г Л О Б У С

Аналитический бюллетень

---

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բազմաբևեռ և ասիմետրիկ «սառը պատերազմ» .....	5
ՆԱՏՕ-ի Ռիգայի գագաթաժողովը .....	9
Милитаризация Южного Кавказа .....	18
Многоуровневая европейская интеграция Армении .....	21
«Армянский гамбит»: гибкий подход к превентивным возможностям .....	25
Չինաստանի նավթագազային ներդրումները Մերձավոր Արևելքում .....	30
Իսլամական գործոնը Վրաստանում .....	33
Հայոց առևտրատնտեսական ներկայությունն աշխարհում .....	35

## ԲԱԶՄԱԲԵՎԵՌ ԵՎ ԱՍԻՄԵՏՐԻԿ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ»

Արդի ռազմաքաղաքական զարգացումների բնույթն ըմբռնելու համար օգտակար է համեմատել և համադրել դրանք 20-րդ դարի երկրորդ կեսին ընթացող գործընթացների հետ: Այն տարիների «սառը պատերազմը» (*ՄՊ*) և ներկայիս զարգացումներն ունեն ընդհանրություններ և տարբերություններ, որոնց վերլուծությունը պետք է որ նպաստի քաղաքական հեռանկարների վերաբերյալ հիմնավորված կանխատեսումներ կատարելուն:

**«Սպառազինությունների մրցավազքը».** Առաջին *ՄՊ-ի* դարաշրջանը բնութագրող առանցքային հասկացություններից էր «սպառազինությունների մրցավազքը», որը Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության առաջնորդությամբ ընթանում էր «Ազատ աշխարհի» և «Սոցիալիստական ճամբարի» միջև: Կողմերի «ռազմական գործիքներն» էին երկու խոշոր դաշինքները՝ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը (ՆԱՏՕ, հիմնվել է 1949թ.) և Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը (ՎՊԿ, 1955-1991թթ.), որոնց ցամաքային «անմիջական շփման» գիծն անցնում էր Եվրոպայով և մասամբ՝ Հարավային Կովկասով:

Նման երկբևեռ համակարգում «սպառազինությունների մրցավազքը» հիմնականում *սի-մետրիկ* բնույթ էր կրում. ամերիկյան և խորհրդային զինված ուժերը տիրապետում էին գրեթե հավասար ներուժի: Այդ հավասարակշռության խախտումը որևէ ոլորտում կողմերը հիվանդագին էին ընդունում և դրությունը շտկելու համար դիմում էին հնարավոր բոլոր միջոցների: Նման իրավիճակը ծանր էր անդրադառնում հատկապես խորհրդային տնտեսության վրա, որը զգալիորեն զիջում էր արևմտյանին. համարվում է, որ ԽՍՀՄ փլուզման տնտեսական պատճառներից մեկը «սպառազինությունների մրցավազքն» էր: Ավելին. միանգամայն հիմնավոր է այն վարկածը, թե նման մրցավազքը ԱՄՆ-ի կողմից կիրառվող ռազմավարություն էր, որը «պարտադրվում» էր «սովետներին» նրանց ուժասպառ անելու նպատակով:

Ներկա ժամանակաշրջանին բնորոշ չեն նաև հակամարտող ռազմաքաղաքական դաշինքները: Շարունակում է գործել, որպես «ժառանգություն» Առաջին *ՄՊ-ից*, Հյուսիսատլանտյան կազմակերպությունը: Սակայն անգամ ՆԱՏՕ-ին այսօր հատուկ է որոշակի ներքին «քաղաքական անջատողականություն»՝ պայմանավորված հյուսիսատլանտյան և եվրակենտրոն գաղափարախոսությունների հակասություններով: Կարելի է արձանագրել, որ ՆԱՏՕ-ն այլևս չի ընկալվում որպես Եվրոպան պաշտպանելու առաքելություն կատարող կազմակերպություն և այսօր ավելի շատ, քան նախկինում, սպասարկում է ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի շահերը: Սակայն բոլոր պարագաներում ՆԱՏՕ-ն չունի հավասարազոր մրցակիցներ և գերակայում է ռազմական հարթությունում: Այդ ոլորտում անհամեմատ ավելի համեստ դիրքեր է գրավում նախկին խորհրդային հանրապետություններից մի քանիսը ներառող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ), իսկ զարգացման մեծ հեռանկարներ ունեցող Շանհայի համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ) որպես ռազմական դաշինք առայժմ չի ձևավորվել:

Նույն պատկերն է նաև նախկին գլխավոր հակառակորդների պարագայում: Միացյալ Նահանգները ռազմական ոլորտում էապես գերազանցում է Ռուսաստանին և Չինաստանին ոչ միայն առանձին, այլև միասին վերցրած. ԱՄՆ ռազմական բյուջեն կազմում է աշխարհում կատարվող ռազմական ծախսերի գրեթե կեսը, իսկ ամերիկյան զինված ուժերը ռազմական տեխնիկայի և ռազմարվեստի ոլորտներում չունեն իրենց հավասարը:

Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ անգամ բացարձակ ռազմական գերազանցությունը չի կարող ԱՄՆ-ի համար երաշխավորել գաղափարախոսական, քաղաքական և տնտեսական գերակայություն աշխարհում: Դրա ցայտուն օրինակն է այն, ինչ տեղի է ունենում Իրաքում և ինչ տեղի կունենա գրեթե նույն տրամաբանությամբ ընթացող զարգացումների հետևանքով

Աֆղանստանում. այս կամ այն երկրի ռազմական օկուպացիան դեռևս չի նշանակում լիարժեք վերահսկում այնտեղ ընթացող գործընթացների վրա:

Պետք է ընդունել, որ ամերիկյան ռազմավարությունը, չնայած շարունակաբար կատարելագործվում և ենթարկվում է բարեփոխումների, ինչ-որ առումով արխայիկ բնույթ է կրում: Թվում է, թե ամերիկյան քաղաքականությունը մշակողները դեռևս գտնվում են *Առաջին ՄՊ-ում* տարած հաղթանակի տպավորության տակ և վերարտադրում են արդեն պատմություն դարձած ժամանակաշրջանի մոտեցումը, երբ առաջնահերթ և որոշիչ խնդիրը ռազմական գերակայությունն էր: Նման պնդումը չի նշանակում, թե ռազմական ներուժը վերածվել է երկրորդական գործոնի և չի կարևորվում: Դա ընդամենը վկայում է այն մասին, որ *արդի քաղաքականության տրամաբանությունը զգալի փոփոխություններ է կրել, և այսօր, առավել քան նախկինում, կարևորագույն նշանակություն է ձեռք բերել քաղաքակրթական, գաղափարախոսական, սոցիալական, տնտեսական և բնական՝ հատկապես էներգետիկ, ռեսուրսների տիրապետումը: Ելնելով այդ իրողությունից՝ Երկրորդ ՄՊ-ի դերակատարները հիմնավորված կերպով խուսափում են անհեռանկարային (հատկապես ԱՄՆ պարագայում) դասական սպառազինությունների մրցակցաբից՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով իրենց ինքնիշխանությունն ապահովող ոչ միայն ռազմական, այլև տարաբնույթ այլ ռեսուրսների զարգացմանը:*

Նման իրադրությունը պայմանավորում է այսօրվա մրցակցության *ասիմետրիկ (անհամաչափ)* բնույթը, քանի որ աշխարհաքաղաքական դերակատարները միմյանց դեմ կիրառում են տարբեր որակի «սպառազինություններ», եթե պայմանականորեն այդպես անվանենք վերոնշյալ ռեսուրսները:

***«Մառը պատերազմ-2»-ի դերակատարները և հակամարտության ասիմետրիկ բնույթը.***

Չնայած այլընտրանքային ռազմաքաղաքական դաշինքների բացակայությանը, այսօր ուրվագծվում են այն աշխարհաքաղաքական-քաղաքակրթական միավորները, որոնք մտահոգված լինելով իրենց ինքնիշխանության պահպանման խնդիրներով՝ միևնույն ժամանակ ունեն անհրաժեշտ ռեսուրսներ և քաղաքական կամք (ինչը նույնպես կարևորագույն ռեսուրս է) ամերիկյան էքսպանսիային դիմակայելու համար: Գլոբալ հարթությունում նման միավորների կարգավիճակ ունեն Չինաստանը և Ռուսաստանը, Իսլամական աշխարհը և վերապահումներով՝ մայրցամաքային Եվրոպան ու լատինաամերիկյան որոշ երկրների համախումբը:

Պետք է արձանագրել, որ սկզբնական փուլում այդ դերակատարների դիմադրությունն ամերիկյան ազդեցությանը կրում էր ավելի շուտ «քաղաքացիական անհնազանդության» տեսք: Սակայն սեփական «կայացմանը» զուգահեռ՝ նրանց հարաբերությունները ԱՄՆ-ի հետ (իսկ որոշակի ոլորտներում՝ նաև միմյանց նկատմամբ) աստիճանաբար նմանվում են նրան, ինչը գոյություն ունեն Առաջին ՄՊ-ի տարիներին, այսինքն՝ ընթանում են.

- քաղաքական-դիվանագիտական ակտիվ խուսանավումներ,
- տնտեսական սուր մրցակցություն,
- տեղեկատվական (քարոզչական, հոգեբանական), երբեմն՝ քաղաքակրթական բախումների մակարդակով, պատերազմներ,
- միջամտություն մրցակցի ներքաղաքական խնդիրներին,
- կոշտ, ուժային պայքար հատուկ ծառայությունների ոլորտում,
- անուղղակի ռազմական առճակատում, այսպես կոչված, «լռակալ» կամ «փոքր ինտենսիվության» պատերազմներում, որոնց շարքին են դասվում հակամարտությունները Մերձավոր և Միջին Արևելքում և գործընթացներն Աֆղանստանում:

Վերոնշյալի համատեքստում դիտարկենք ԱՄՆ-ՉԺՀ սկզբունքային և ռազմավարական բնույթ կրող մրցակցությունը, քանի որ «սեղանին է դրված» քաղաքական և տնտեսական առաջատարության խնդիրը ոչ միայն Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանում, այլև գլոբալ հարթությունում: Հատկանշական է, որ այդ տերությունների հարաբերությունները, չնայած իրենց «սառըպատերազմյան բնույթին», ամենականոնակարգվածն են: Դրանք ինչ-որ առումով հիշեցնում են ԱՄՆ-ԽՍՀՄ հարաբերությունները նախորդ դարի 70-ականներին, երբ վերջիններս ռազմական հնարավորությունները հավասարակշռված էին: Նման իրավիճակը պայմա-

նավորված է հետևյալով. չնայած նրան, որ ռազմական ներուժի և ՀՆԱ պարամետրերով Չինաստանը զգալիորեն զիջում է ԱՄՆ-ին, սակայն տիրապետում է հսկայական արդյունաբերական և մարդկային ռեսուրսների, իսկ նրա պետական և հանրային համակարգն առաջնորդվում է հստակ գաղափարախոսությամբ: Այդ առումով ՉԺՀ-ն նույնպես գերտերություն է, այն կարողանում է արդյունավետ և *ասիմետրիկ* մրցակցել Միացյալ Նահանգների հետ:

Ուժերի *ասիմետրիկ* հավասարակշռությունն արդեն բնորոշ է նաև ԱՄՆ-Ռուսաստան հարաբերություններին: Վերջինիս ՀՆԱ-ն բազմապատիկ զիջում է ամերիկյանին, սակայն միջուկային ուժերի հարաբերական պարիտետով, իր հսկայական տարածքով (որը կարևորագույն աշխարհաքաղաքական չափանիշ է), ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոների պաշարներով (որոշ գնահատականներով՝ վերահսկում է համաշխարհայինի 20-30%-ը) այդ տերությունը նույնպես հանդիսանում է խոշոր աշխարհաքաղաքական դերակատար: Հատկանշական է, որ Ռուսաստանի բնական ռեսուրսները բավարար դարձան *ՄՊ-ի* դերակատար լինելու համար միայն պետական համակարգի վերականգնման և ուրույն գաղափարախոսական դրույթներ ձևավորելուց հետո (մինչ այդ Ռուսաստանի դերակատարումը սահմանափակվում էր սեփական ինքնիշխանությունը պահպանելու հարցերով):

Այսօր ռուս-ամերիկյան մրցակցությունը, որը հենվում է Առաջին *ՄՊ-ի* ավանդույթների վրա, ընթանում է հետխորհրդային տարածքի վրա վերահսկողություն սահմանելու շուրջ և էներգետիկ խնդիրների ոլորտում: Զուգահեռաբար հրատապ են դարձել Մոսկվա-Բեռլին-Փարիզ, Մոսկվա-Թեհրան, Մոսկվա-Պեկին (հատկապես ՇՀԿ կայացման համատեքստում) հարաբերությունների խնդիրները: Ակնհայտ է, որ եթե այդ հարաբերությունները տեղափոխվեն լիարժեք ռազմավարական մակարդակ, ապա դա կհանգեցնի գլոբալ քաղաքական համակարգի լուրջ փոփոխությունների:

Թերևս ամենադրամատիկ ձևով են զարգանում ԱՄՆ-Իսլամական աշխարհ հարաբերությունները, որոնք ընթանում են հակահարեկչական *ասիմետրիկ* պատերազմի կանոններով: Մակայն այդ ոլորտում առաջին պլան են մղվել ոչ այնքան ահաբեկչական կազմակերպությունները (որոնց գործունեությունն Իրաքում ստիպում է ամերիկացիներին նահանջել), որքան Իրանը: Այդ տարածաշրջանային տերությունը, ունենալով քաղաքակրթական ավանդույթներ, ազգային-կրոնական գաղափարախոսություն և էներգետիկ ռեսուրսներ, արագորեն վերափոխվում է *ասիմետրիկ* գործող գլոբալ նշանակության դերակատարի: ԱՄՆ-Իրան սառը պատերազմը մղվում է գլխավորապես գաղափարախոսական և աշխարհատեսական հարթություններում:

Արդի բազմաբևեռ *ՄՊ-ում* յուրահատուկ դիրք է գրավում մայրցամաքային Եվրոպան, որի առաջատարներ Գերմանիան և Ֆրանսիան Առաջին *ՄՊ-ի* ավարտից հետո փորձում են դուրս գալ ամերիկյան ազդեցության գոտուց և վարել ինքնուրույն քաղաքականություն: Հատկանշական է, որ Եվրամիության ձևաչափն այդ տերությունների համար միաժամանակ և՛ լիարժեք աշխարհաքաղաքական միավորի վերափոխվելու հնարավորություն է, և՛ յուրովի «գսպաշապիկ», քանի որ այդ ձևաչափի միջոցով ԱՄՆ-ը կարողանում է իրեն հարող եվրոպական պետությունների միջոցով իրագործել իրեն շահավետ ծրագրերը: Հյուսիսատլանտյան և Եվրակենտրոն աշխարհաքաղաքական հայեցակարգերին բնորոշ հակասությունները հանգեցնում են նրան, որ ԱՄՆ-Եվրոպա հարաբերություններում արդեն նշմարվում են «սառը պատերազմյան» նախանշանները, որոնք իրենց զգալ են տալիս տեղեկատվական և տնտեսական հարթություններում:

Ուշադրության արժանի են նաև Լատինական Ամերիկայում ընթացող գործընթացները, որոնց պատմական արմատները տանում են դեպի իսպանական և անգլոսաքսոնյան քաղաքակրթությունների հակամարտությունն ու լատինաամերիկյան հոգեկերտվածքին բնորոշ ազգային-ազատագրական, իսկ հետագայում՝ «ձախ» կողմնորոշում ունեցող շարժումները: «Լատինաամերիկյան» սառը պատերազմն ընթանում է ԱՄՆ առաջին «կայսերական» հայեցակարգի՝ Մոնրոյի դոկտրինի համատեքստում: Որպես նոր երանգ կարելի է համարել նախկին քաղաքակրթական մրցակցության յուրահատուկ վերափոխումը և տեղափոխումը բուն Միացյալ Նահանգներ, որտեղ անգլիալեզու և իսպանալեզու հատվածների առկայությունը վերաճում է ժողովրդագրական լուրջ հիմնախնդրի. տեսանելի ապագայում «լատինոսները»

կարող են մեծամասնություն կազմել ԱՄՆ-ում, ինչը նույնպես կարելի է դիտարկել որպես *ասիմետրիկ* մարտահրավեր այդ տերությանը:

**Հետևություն.** Արդի բազմաբևեռ և ասիմետրիկ սառը պատերազմը նախնական փուլում է: ԱՄՆ հավաքական ռեսուրսների հարաբերական նվազմանը և նրա մրցակիցների հզորացմանը զուգահեռ՝ այդ «սառը» հակամարտությունը սաստկանալու միտումներ է ցուցաբերելու: Միննույն ժամանակ, լիարժեք բազմաբևեռ համակարգի ձևավորումը կարող է հանգեցնել նաև այսօր ԱՄՆ-ի դեմ պայքարում համագործակցող դերակատարների շահերի բախմանը: Հաշվի առնելով միջուկային զենքի տիրաժավորումը տարբեր երկրներում՝ նման իրադրության վերահսկումը և «լիցքաթափման» ռազմավարության իրագործումը, ինչպես դա կատարվեց Առաջին ՄՊ-ի դարաշրջանում, անհամեմատ ավելի բարդ են լինելու: Այս ամենը ստիպելու է հիմնական դերակատարներին վերիմաստավորել «կոլեկտիվ անվտանգության» վերաբերյալ տարածաշրջանային թեզերը՝ փորձելով այդ հասկացությունները տեղափոխել և «հարմարեցնել» գլոբալ քաղաքական հարթությունում: Նման է նաև նրան, որ այսօր քաղաքական-փորձագիտական հանրությունը դեռևս գտնվում է «սցենարային» մտածելակերպի ստերեոտիպերի շրջանակներում, մինչդեռ նման մեթոդաբանությունը, թերևս, չի կարող արդյունավետ լինել սպասվող իրողություններում:

**Գազիկ Հարությունյան**  
**«Նորավանք» հիմնադրամ**

## ՆԱՏՕ-Ի ՌԻԳԱՅԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ (Իրավիճակային վերլուծություն)

Թեև 2006թ. նոյեմբերի 28-29-ը Լատվիայի մայրաքաղաքում կայացած ՆԱՏՕ-ի 22-րդ գագաթաժողովի արդյունքում որևէ երկիր պաշտոնապես չիրավիքվեց անդամակցելու Հյուսիսատլանտյան դաշինքին<sup>1</sup>, սակայն Ռիգայի գագաթաժողովը հստակեցրեց ՆԱՏՕ-ի հետագա գործունեության երկու կարևոր բաղկացուցիչ.

- վերջնականապես ամրագրվեց այն միտքը, որ առաջիկայում ՆԱՏՕ-ն ստանձնելու է գլոբալ մասշտաբի առաքելություններ, և այդ առումով արդեն իսկ ստեղծված օպերացիոնալ հնարավորություններին զուգահեռ հիմնվում են նոր ռեսուրսներ ու մեխանիզմներ,
- աշխարհագրական ընդլայնման տեսանկյունից՝ միջնաժամկետ հեռանկարում ՆԱՏՕ-ի համար առաջնային նշանակություն է ստանում Հարավային Կովկաս-Կենտրոնական Ասիա հատվածը:

### *ՆԱՏՕ-ի ձևափոխումը*

Համաձայն Ռիգայի գագաթաժողովում ընդունված «Համապարփակ քաղաքական ուղեցույցի»<sup>2</sup> ներկայումս ՆԱՏՕ-ի անդամ երկրների նկատմամբ լայնածավալ կոնվենցիոնալ հարձակման հնարավորությունը չափազանց փոքր է, փոխարենը («ինչպես ցույց են տալիս 2001թ. ԱՄՆ նկատմամբ իրականացված հարձակումները») ապագա հարձակումները նախ և առաջ կրելու են ոչ կոնվենցիոնալ, ասիմետրիկ բնույթ և կարող են կազմակերպվել *էվրաստլանտյան արեայից դուրս*:

Վերոհիշյալ հետևությունն է ընկած ՆԱՏՕ-ի ձևափոխման հիմքում: Եթե նախկինում Հյուսիսատլանտյան դաշինքը կոնկրետացնում էր իր գործունեության աշխարհագրական ոլորտը (Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա), ելնելով այդ թվում սպառնալիքի բնույթից<sup>3</sup>, ապա նոր մոտեցման հիմքում (հաշվի առնելով նաև տարածաշրջանային ճգնաժամերի ու հակամարտությունների հետևանքները, «չկայացած» երկրներից բխող անկայունությունը և *կենսական նշանակության ռեսուրսների մատակարարման դադարեցման հավանականությունը*), որպես գործունեության դաշտ է ներկայացվում ողջ աշխարհը:

Որպես ձևափոխման **ռազմական բաղկացուցիչ** ՆԱՏՕ-ում ընթանում է անդամ երկրների զինված ուժերի համակարգային փոփոխություն՝ շեշտը դնելով արշավային (էքսպեդիցիոն) տիպի գործողությունների վրա: Խնդիր է դրված ՆԱՏՕ-ի երկրների ցամաքային ուժերի առնվազն 40%-ը նախապատրաստել արշավային գործողությունների իրականացմանը, իսկ 80%-ը՝ ցանկացած ժամանակ երկարատև ռազմական գործողությունների վարմանը: Մինչդեռ, ըստ որոշ փորձագիտական գնահատականների, այսօր ՆԱՏՕ-ի անդամ երկրների մեծ մասի զինված ուժերի զգալի հատվածը դեռևս հարմարեցված է Եվրոպայում լայնածավալ (ավանդական) ռազմական գործողությունների վարմանը:

<sup>1</sup> Ըստ Ռիգայի գագաթաժողովի *հռչակագրի (Riga Summit Declaration)* 30-րդ կետի՝ նման հրավեր լինելու է ՆԱՏՕ-ի հաջորդ գագաթաժողովում՝ 2008թ.: Խոսքը, թերևս, վերաբերում է միայն Խորվաթիային, Ալբանիային և Մակեդոնիային:

<sup>2</sup> Ռիգայում կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովում, բացի *Ռիգայի գագաթաժողովի հռչակագրից*, ընդունվել է նաև *Համապարփակ քաղաքական ուղեցույց (Comprehensive Political Guidance)* փաստաթուղթը: Փաստորեն, վերջինս գալիս է լրացնելու դեռևս 1999թ. ընդունված ՆԱՏՕ-ի *Ռազմավարական հայեցակարգը (Strategic Concept)*՝ սահմանելով Հյուսիսատլանտյան դաշինքի գործառնության առաջնությունները:

<sup>3</sup> Ըստ 1949թ. ապրիլի 4-ին Վաշինգտոնում կնքված *Հյուսիսատլանտյան պայմանագրի* 5-րդ հոդվածի, «Կողմերը համաձայնվում են, որ *Եվրոպայում կամ Հյուսիսային Ամերիկայում* զինված հարձակումը նրանցից մեկի կամ մի քանիսի դեմ պետք է դիտարկվի որպես հարձակում նրանց բոլորի դեմ...»:

Անցած վեց տարիներին ՆԱՏՕ-ի նոր՝ ձևափոխման հրամանատարության և զանգվածային ոչնչացման զենքեր (ՉՈԶ) ունեցող հակառակորդների դեմ հատուկ գումարտակի կազմավորումից զատ, արդեն Ռիգայի գազաթաժողովում հայտարարվեց *Արագ արձագանքման* 25 հազարանոց զորամիավորման (*NATO Response Force*) ստեղծման մասին, որն արդեն 2007թ. հունվարի 1-ից պատրաստ կլինի կատարել իր առջև դրված առաջադրանքները: Նախատեսվում է, որ զորամիավորումը կօգտագործվի աշխարհի տարաբնույթ «թեժ կետերում»՝ կայունության վերահաստատման համար: Զորամիավորման համար ուժեր են առանձնացրել ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Գերմանիան, Իսպանիան և Թուրքիան:

Գազաթաժողովի ընթացքում մեկնարկեցին ևս երկու ծրագրեր՝ *ՆԱՏՕ-ի Հատուկ գործողությունների ուժերի նախաձեռնությունը* (*NATO Special Operations Forces Initiative*), որը, փաստորեն, միտված է ընդլայնելու վերոհիշյալ 25 հազարանոց զորամիավորման հնարավորությունները, և *Ռազմավարական օդափոխադրումների նախաձեռնությունը* (*Strategic Airlift Initiative*): Վերջինիս շրջանակներում նախատեսվում է, որ ՆԱՏՕ-ի անդամ 15 երկիր և Շվեդիան պետք է համախումբ կազմավորեն հեռահար փոխադրումներ իրականացնող հատուկ ուժեր՝ այդ նպատակով ձեռք բերելով ամերիկյան *C-17* տրանսպորտային առայժմ երեք ինքնաթիռ<sup>1</sup>:

Որպես Հյուսիսատլանտյան դաշինքի ձևափոխման **քաղաքական քաղկացուցիչ** պետք է դիտարկել գազաթաժողովում *Գլոբալ համագործակցության Ռիգայի նախաձեռնության* (*Riga Global Partnership Initiative*) մեկնարկի մասին հայտարարությունը: Ծրագրվում է այդ նախաձեռնության շրջանակներում խորացնել Ավստրալիայի, Ճապոնիայի, Հարավային Կորեայի, Շվեդիայի ու Ֆինլանդիայի հետ ՆԱՏՕ-ի ունեցած հարաբերությունները՝ անցնելով համատեղ գործավարությունների, թրեյնինգների և պաշտպանական պլանավորումների իրականացմանը: Ռիգայում նաև հայտարարվեց *Թրեյնինգի ոլորտում համագործակցության ՆԱՏՕ-ի նախաձեռնության* (*NATO Training Cooperation Initiative*) մասին: Այն ուղղված է մերձավորարևելյան երկրներին, և այդ երկրների զինված ուժերի հետ ՆԱՏՕ-ի մասնագետները պետք է անցկացնեն հակաահարեկչական, ՉՈԶ տարածման դեմ պայքարի և կայունության հաստատման թրեյնինգներ:

### ***Հակասություններ ՆԱՏՕ-ում***

Ռիգայի գազաթաժողովի ընթացքում դաշինքի ներսում ի հայտ եկած հակասությունները հիմնականում կարելի է բաժանել երեք մասի.

- աֆղանական կամպանիա՝ Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան և Իսպանիան չեն ցանկանում իրենց զորքերը Աֆղանստանի հյուսիսային մասից տեղաշարժել հարավ՝ թալիբների դեմ ընթացող ռազմական գործողություններին մասնակցելու համար. մարտերին մասնակցում են գերազանցապես ամերիկյան, բրիտանական, կանադական և նիդերլանդական զորամիավորումները,
- առնվազն Ֆրանսիան ու Գերմանիան դեմ են ՆԱՏՕ-ին Վրաստանի առաջիկա անդամակցությանը, ինչին սատարում են ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ում նրա դիրքորոշմանը մոտ կանգնած երկրները (նախ և առաջ՝ Մեծ Բրիտանիան, Լեհաստանը, Էստոնիան, Լատվիան և Լիտվան),
- Ֆրանսիան վերապահումով է մոտենում էներգետիկ անվտանգության ապահովման խնդիրը ՆԱՏՕ-ի գործունեության գերակայություն դարձնելու՝ առաջին հերթին ԱՄՆ-ի ու Լեհաստանի ձգտմանը:

### ***Ռուսական ուղղությունը***

ՆԱՏՕ-ի համար ռուսական ուղղությունը վերստին դառնում է գերակա: Գազաթաժողովում անդամ երկրների մի մասի կողմից Մոսկվայի հանդեպ որդեգրած վերջին տարիների համար աննախադեպ բացասական դիրքորոշումը կարելի է բացատրել երկու հանգամանքով.

<sup>1</sup> Ամերիկյան *Boeing* ընկերության արտադրած *C-17* բեռնատար ինքնաթիռը, որի առաջին թռիչքը կայացել է 1991թ., կարող է մեկ չվերթի ընթացքում առավելագույնը 8.710կմ հեռավորության վրա փոխադրել առավելագույնը 78.108կգ բեռ:



- կապված էներգետիկ անվտանգության հետ՝ Ռուսաստանն առնվազն ընկալվում է որպես մարտահրավեր,
- Ռուսաստանի նկատմամբ որդեգրած բացասական դիրքորոշումը պետք է դիտարկել վերջին շաբաթներին այդ երկրի ուղղությամբ տարվող դիվանագիտական-տեղեկատվական ճնշման համատեքստում:

Էներգետիկ աղբյուրների և էներգետիկ հոսքերի անխափան գործունեության անվտանգության ապահովումն աստիճանաբար դառնում է ՆԱՏՕ-ի առաջնային նպատակներից մեկը:

Թեև այդ առումով հայեցակարգային մշակումները դեռ ավարտված չեն, և հարցի առնչությամբ ՆԱՏՕ-ի ներսում կան որոշակի հակասություններ, սակայն արդեն իսկ բանակցությունների սեղանին են դրված մի քանի դրույթներ: Վերջիններս տեղ էին գտել ԱՄՆ Սենատի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ռիչարդ Լուգարի զեկույցում, որը նա ներկայացրեց մինչև գազաթափոփոխվող՝ նոյեմբերի 27-ին, Ռիգայում.

- առաջիկա տասնամյակներում եվրոպական թատերաբեմում ռազմական բախման ամենից հավանական պատճառ են հանդիսանալու էներգետիկ պակասորդը և մանիպուլյացիաներն այդ ոլորտում,
- հաշվի առնելով զարգացող մեծ երկրների (Չինաստան, Հնդկաստան) էներգետիկ կարիքների աճը՝ Արևմուտքում էներգետիկ անվտանգության հարցը ձեռք է բերում լրացուցիչ նշանակություն,
- սեփական էներգետիկ կարիքները հոգալու համար ՆԱՏՕ-ի անդամ երկրները տարեկան մի քանի հարյուր միլիարդ դոլար են փոխանցում աշխարհի ավտորիտար վարչակարգերին, որոնք այդ միջոցներն օգտագործում են տեղի ժողովրդավարական շարժումների դեմ և ապահովագրվում միջազգային ճնշումներից,
- վատագույն սցենարի համաձայն՝ այդ վարչակարգերը կօգտագործեն իրենց էներգետիկ կարողությունները՝ էներգիա ներմուծող երկրների նկատմամբ քաղաքական ճնշումներ քանեցնելու նպատակով,
- այդպիսի օրինակներ արդեն իսկ կան. Իրանը սպառնաց դադարեցնել սեփական նավթի առաքումը միջազգային շուկա, եթե իր նկատմամբ կիրառվեն պատժամիջոցներ՝ կապված սեփական միջուկային ծրագրի զարգացումների հետ, իսկ Ռուսաստանը դադարեցրեց բնական գազի մատակարարումը Ուկրաինային («ուկրաինական տնտեսությունը և ռազմական կարողությունը լրջորեն վնասվեցին՝ առանց անգամ մեկ կրակոցի, և նմանատիպ վտանգներն ու կորուստները [հավանականությունը] ՆԱՏՕ-ի անդամ որոշ երկրների պարագայում աճել են»),
- ՆԱՏՕ-ի գործունեության արդյունավետությունը ոչ այնքան հավանական ռազմական բախումներում հաղթելու կարողության, որքան այդ բախումները կանխարգելելու մեջ է,
- ՆԱՏՕ-ն պետք է հստակեցնի, թե ինչ քայլեր է ձեռնարկելու, եթե Լեհաստանը, Գերմանիան, Հունգարիան, Լատվիան կամ որևիցե այլ անդամ երկիր հայտնվի այն սպառնալիքի առջև, ինչ և Ուկրաինայի դեպքում էր, քանի որ էներգետիկ հարձակումների հետևանքով տուժում է տվյալ երկրի տնտեսությունը՝ հանգեցնելով մեծ կորուստների,
- դաշինքը պետք է ընդունի, որ իր անդամների նկատմամբ նման հարձակման դեպքում ուժի մեջ է մտնելու *Հյուսիսատլանտյան պայմանագրի* 5-րդ հոդվածը, սակայն դա չի նշանակում, թե այդ պարագայում պետք է անպայման ռազմուժ կիրառվի, այլ ավելի շուտ նշանակում է, որ ՆԱՏՕ-ն պետք է նախապատրաստվի դիմագրավելու նման հարձակմանը և պատասխանի էներգիան որպես զենք օգտագործելու քայլերին:

2006թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից սկսեց ի հայտ գալ ու աստիճանաբար ընդլայնվել Ռուսաստանի նկատմամբ Միացյալ Նահանգների ու եվրոպական ազդեցիկ երկրների գործադրած դիվանագիտական-տեղեկատվական ճնշումը<sup>1</sup>: Ճնշման հիմնական տարրերն են.

- դիվանագիտական առումով. հոկտեմբերին Եվրամիությունը ճնշում քանեցրեց Ռուսաստանի նկատմամբ, որպեսզի վերջինս վավերացնի դեռևս 1991թ. ստորագրված *Էներգե-*

<sup>1</sup> Ճնշման նպատակներից է նաև ներգործել 2007թ. Ռուսաստանում կայանալիք խորհրդարանական ընտրությունների վրա:

տիկ խարտիան, ինչը հնարավորություն կտա Եվրամիությանը Ռուսաստանի գազամուղներով ազատորեն մուտք գործել գազի կենտրոնաասիական շուկա<sup>1</sup>, որպես հետևանք՝ առանց լուրջ արդյունքների ավարտվեց նոյեմբերի 24-ին Հելսինկիում կայացած ԵՄ-Ռուսաստան գազաթափափուկը, և վերջապես Ռիգայում կայացած ՆԱՏՕ-ի գազաթափափուկի ժամանակ ռուսական թեման երևան եկավ վերջին տարիների համեմատ աննախադեպ բացասական ֆոնով,

- տեղեկատվական առումով Ռուսաստանի դեմ օգտագործվում են 2006թ. հոկտեմբերի 7-ին Մոսկվայում սպանված ռուս հայտնի լրագրող Աննա Պոլիտկովսկայայի, նոյեմբերի 24-ին Լոնդոնի հիվանդանոցներից մեկում *պոլոնիում-210* նյութի թունավորումից մահկանացուն կնքած Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության նախկին աշխատակից Ալեքսանդր Լիտվինենկոյի և նույն օրը Դուբլինում առողջության կտրուկ վատթարացման պատճառով (հետագայում պարզվեց՝ նույնպես թունավորման արդյունքում) հիվանդանոց տեղափոխված Ռուսաստանի նախկին վարչապետ Եգոր Գայդարի «գործերը»<sup>2</sup>:

### ***ՆԱՏՕ-Հարավային Կովկաս***

Ռիգայի գազաթափափուկում արձանագրվեցին Հարավային Կովկասում Հյուսիսատլանտյան դաշինքի հետագա ներգրավման նպատակները:

*Ռիգայի գազաթափափուկի հռչակագրի* 43-րդ կետով ՆԱՏՕ-ն իր աջակցությունն է հայտնում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի տարածքային ամբողջականությանը, անկախությանը և ինքնիշխանությանը՝ միաժամանակ կոչ անելով առկա հակամարտությունները լուծել խաղաղ ճանապարհով: Փաստորեն, առաջին անգամ հարավկովկասյան հարցերի նկատմամբ Հյուսիսատլանտյան դաշինքը որդեգրեց նման դիրքորոշում, ինչը բացակայում էր թե՛ 2002թ. Պրահայի և թե՛ 2004թ. Ստամբուլի գազաթափափուկների եզրափակիչ փաստաթղթերում: Այդ հանգամանքը կարող է միայն վկայել տարածաշրջանում սեփական ազդեցությունը մեծացնելու ՆԱՏՕ-ում առկա ծրագրերի մասին:

Մյուս կողմից՝ հատուկ Վրաստանի կապակցությամբ հռչակագրում ընդգծվում է, թե դաշինքը պատրաստակամություն է հայտնում Թբիլիսիի հետ շարունակել *Խորացված երկխոսությունը (Intensified Dialogue)*, որը ներառում է համագործակցության քաղաքական, ռազմական, ֆինանսական և անվտանգության կողմերը:

### ***Հետևություններ***

Ռիգայում կայացած ՆԱՏՕ-ի գազաթափափուկն ավելի շատ կենտրոնացավ դաշինքի ռազմական թևի ձևափոխման, քան նոր անդամների ներգրավման վրա:

Այդ հանգամանքը կարելի է բացատրել ինչպես նոր տիպի մարտահրավերների (Էներգետիկ անվտանգություն) ի հայտ գալով, այնպես էլ դաշինքի ներսում ի հայտ եկած հակասություններով:

Սակայն հիմնական պատճառը պետք է տեսնել կազմակերպությանը նոր իմաստ (գլոբալ առաքելություններ) հաղորդելու, հետևաբար՝ համապատասխան գործառնական վերափոխումներ անցկացնելու մտադրության մեջ: Այդ առումով պատահական չէ, որ Աֆղանստանում ընթացող ՆԱՏՕ-ի առաքելությանը տրվում է նման կարևորություն: Այլ հարցերից գատ, դաշինքի աֆղանական կամպանիան դիտարկվում է որպես մոդել հետագա գործողությունների համար:

<sup>1</sup> Ռուսաստանը հրաժարվեց վավերացնել խարտիան:

<sup>2</sup> Պետք է նույն հարթության վրա դիտարկել նաև նոյեմբերի 28-ին Ուկրաինայի, իսկ դեկտեմբերի 6-ին Լեհաստանի խորհրդարանների կողմից ընդունված, համապատասխանաբար, օրենքն ու բանաձևը: Վերջիններս ցեղասպանություն են բնութագրում 1932-1933թթ. Խորհրդային Ուկրաինայում տեղ գտած զանգվածային սովամահությունը (հոլոդոմոր), ինչի հետևանքով, ըստ տարբեր գնահատականների, զոհվել է 5-10 միլիոն մարդ: Պաշտոնական Մոսկվան հերքում է, թե ԽՍՀՄ-ում այդ սովամահությունը հատուկ էր կազմակերպվել:

Դաշինքի հետագա ընդլայնումը Արևելք կփոքրացնի ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական խոշոր երկրների արտաքին քաղաքականության մանևրությունը, քանզի դեպի Արևելք հետագա ընդլայնումը լրացուցիչ լարվածություն է առաջացնելու նաև Ռուսաստանի հետ հարաբերություններում: Այդ կերպ կարելի է բացատրել Վրաստանի հարցում Ֆրանսիայի ու Գերմանիայի որդեգրած դիրքորոշումները:

Էներգետիկ անվտանգության հարցը ՆԱՏՕ-ի օրակարգում ձեռք է բերել առաջնային նշանակություն: Հետևաբար, առաջիկայում դաշինքի քաղաքականության մշակման վրա այդ գործոնի ազդեցությունը միայն աճելու է<sup>1</sup>:

Ռիզայի գազաթաժողովում Ռուսաստանի նկատմամբ ձևավորված բացասական մոտեցումն այսօր ԱՄՆ-ում ու Եվրոպայում Մոսկվայի ուղղությամբ տարվող ընդհանուր քաղաքականության մի մասն է և, ըստ ամենայնի, կրելու է միջնաժամկետ բնույթ: Վերջինիս պատճառները հիմնականում երկուսն են.

- գերակա հանդիսացող էներգետիկ հարցում կողմերն ունեն լուրջ հակասություններ,
- հետխորհրդային գրեթե բոլոր երկրների և մերձավորարևելյան հարցերի (Իրան, Պաղեստին, Լիբանան) առնչությամբ առկա տարաձայնություններն աճել են:

Ընդհանուր առմամբ, վերոհիշյալը բավարար հիմք է ենթադրելու, թե առաջիկայում հետխորհրդային ուղղությունը առաջնային տեղ է զբաղեցնելու ՆԱՏՕ-ի գերակայությունների մեջ:

Մեծ է հավանականությունը, որ նախկին ԽՍՀՄ ուղղությամբ ՆԱՏՕ-ն առաջիկայում շոշափելի ձեռքբերումներ ունենա ոչ թե Մոլդովա-Ուկրաինա գծում, այլ Հարավային Կովկասում: Նման ենթադրության հիմք է հանդիսանում Ուկրաինայում և Մոլդովայում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը, իսկ մյուս կողմից՝ Վրաստանի նկատմամբ ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ում նրա դիրքորոշմանը մոտ կանգնած երկրների (առնվազն՝ Մեծ Բրիտանիան, Լեհաստանը, Էստոնիան, Լատվիան և Լիտվան) կողմից տարվող քաղաքականությունը<sup>2</sup>:

Հարավկովկասյան ուղղությամբ ընթացող գործընթացը, սակայն, չի սահմանափակվում սուկ Վրաստանով: Ուշադրության է արժանի Ադրբեջանի որոշումը, ըստ որի 2007թ. հունվարի 1-ից իր զինված ուժերի Բաքվի կորպուսը (այն մարդուժի թվով կազմում է ադրբեջանական բանակի մոտ 20%-ը) պետք է ամբողջովին անցնի ՆԱՏՕ-ի չափանիշներին: Նախատեսվում է նույնը իրականացնել նաև մյուս չորս կորպուսներում: Արդյունքում՝ մինչև 2008թ. վերջ Ադրբեջանի ողջ զինված ուժերը պետք է անցնեն ՆԱՏՕ-ի չափանիշներին:

*Սարգիս Հարությունյան  
Կարեն Վերանյան  
«Նորավանք» հիմնադրամ*

<sup>1</sup> Օրինակ, Ռիչարդ Լուգարի ներկայացրած նշյալ զեկույցում ընդգծվում է Ադրբեջանի և Ղազախստանի հետ հատուկ հարաբերություններ հաստատելու անհրաժեշտությունը՝ չբացառելով անգամ նրանց հետագա անդամակցությունը ՆԱՏՕ-ին:

<sup>2</sup> Պատահական չէ, որ մինչև գազաթաժողով՝ նոյեմբերի 17-ին, ԱՄՆ Սենատն ընդունեց դեռևս հոկտեմբերի սկզբից շրջանառության մեջ գտնվող *ՆԱՏՕ-ում ազատության համախմբման մասին 2006թ. ակտը*: Ըստ դրա՝ Միացյալ Նահանգները քաջալերում և անհրաժեշտ է համարում Խորվաթիայի, Ալբանիայի, Մակեդոնիայի ու Վրաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին և այդ նպատակով հատկացնում է գրեթե \$20 մլն. Վրաստանին՝ \$10 մլն, Մակեդոնիային՝ \$3.6 մլն, Ալբանիային՝ \$3.2 մլն և Խորվաթիային \$3 մլն:

## ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովը

ՆԱՏՕ ԽՎ կանոնադրության համաձայն (հոդված 1/կետ 1)՝ խորհրդաժողովը պետք է բաղկացած լինի 248 խորհրդարանականներից, որոնք անհրաժեշտաբար պետք է լինեն տվյալ ազգային խորհրդարանի անդամներ (հոդված 1/կետ 4):

Կազմակերպության ԽՎ Մշտական հանձնաժողովի որոշմամբ խորհրդաժողովին կարող են ներկայանալ նաև կազմակերպությանը չանդամակցող երկրների խորհրդարանական պատվիրակները: Մշտական հանձնաժողովի իրավասության ներքո են գտնվում ասոցացված խորհրդարանականների՝ այս կամ այն հանձնաժողովի ներգրավման, թվաքանակի ձևավորման և այլ հարցեր (հոդված 2/կետ 1):

ՆԱՏՕ ԽՎ Բյուրոյի կազմում են նախագահը, 5 փոխնախագահները և գանձապահը (հոդված 5/կետ 1): Բյուրոն գումարվում է տարին 3 անգամ: Նախքան ամենամյա նստաշրջանի փակումը խորհրդաժողովն ընտրում է նախագահ, փոխնախագահներ և գանձապահ (հոդված 5/կետ 3): Մշտական հանձնաժողովը պետք է հաստատի, որ փոխնախագահները պատկանում են տարբեր ազգությունների և որ Բյուրոյի անդամներից առնվազն մեկը լինի Կանադայի և Միացյալ Նահանգների պատվիրակության անդամ (հոդված 5/կետ 5):

ՆԱՏՕ ԽՎ-ն կազմված է հետևյալ 5 հանձնաժողովներից.

1. քաղաքացիական անվտանգության հանձնաժողով
2. պաշտպանության և անվտանգության հանձնաժողով
3. տնտեսական հարցերի և անվտանգության հանձնաժողով
4. քաղաքական հանձնաժողով
5. գիտության և տեխնոլոգիայի հանձնաժողով

Խորհրդարանականներն իրավասու են ներկայացնել իրենց ազգային պատվիրակությունները մեկից ավելի հանձնաժողովներում (հոդված 31/կետ 3):

ՆԱՏՕ ԽՎ բյուջեն ֆինանսավորվում է անդամ պետությունների խորհրդարանների կամ կառավարությունների կողմից: Հատկացումներ է կատարում նաև ՆԱՏՕ-ն: Ներկայումս ՆԱՏՕ ԽՎ բյուջեն կազմում է շուրջ €3 մլն:

ՆԱՏՕ ԽՎ խորհրդարանականների թվազուցակը (Քվեերը-Կանադա, 2006թ. նոյեմբերից<sup>1</sup>)

Անդամ պետություն	Խորհրդարանականներ. ընդամենը	Մշտական հանձնաժողովում քվեների բաշխումը <sup>2</sup>
ԱՄՆ	36	6
Ֆրանսիա	18	5
Գերմանիա	18	5
Իտալիա	18	4
Մեծ Բրիտանիա	18	5
Կանադա	12	4
Լեհաստան	12	3
Իսպանիա	12	3
Թուրքիա	12	2
Ռումինիա	10	2
Բելգիա	7	3
Չեխիա	7	2
Հունաստան	7	2
Հունգարիա	7	2
Նիդեռլանդներ	7	3
Պորտուգալիա	7	2
Բուլղարիա	6	2
Դանիա	5	2
Նորվեգիա	5	2
Սլովակիա	5	2
Լիտվա	4	2
Էստոնիա	3	2
Իսլանդիա	3	2
Լատվիա	3	2
Լյուքսեմբուրգ	3	2
Սլովենիա	3	2
<b>Ընդամենը (26)</b>	<b>248</b>	<b>--</b>

Քվեները ՆԱՏՕ ԽՎ հանձնաժողովներում (Քվեերը-Կանադա, 2006թ. նոյեմբերից)

Անդամ պետություն	Քաղաքական	Պաշտպանություն/ անվտանգություն	Տնտեսական անվտանգություն	Քաղաքաց. անվտանգ.	Գիտություն/ տեխնոլոգիա
ԱՄՆ	8	7	7	7	7
Ֆրանսիա	4	4	4	3	3
Գերմանիա	4	4	4	3	3
Իտալիա	4	4	4	3	3
Մեծ Բրիտանիա	4	4	4	3	3
Կանադա	3	3	2	2	2
Լեհաստան	3	3	2	2	2
Իսպանիա	3	3	2	2	2
Թուրքիա	3	3	2	2	2
Ռումինիա	3	3	2	1	1
Բելգիա	2	2	1	1	1
Չեխիա	2	2	1	1	1
Հունաստան	2	2	1	1	1
Հունգարիա	2	2	1	1	1
Նիդեռլանդներ	2	2	1	1	1
Պորտուգալիա	2	2	1	1	1
Բուլղարիա	2	1	1	1	1
Դանիա	1	1	1	1	1
Նորվեգիա	1	1	1	1	1
Սլովակիա	1	1	1	1	1
Լիտվա	(1)	(1)	(1)	(1)	(1)
Էստոնիա	(1)	(1)	(1)	(1)	(1)
Իսլանդիա	(1)	(1)	(1)	(1)	(1)
Լատվիա	(1)	(1)	(1)	(1)	(1)
Լյուքսեմբուրգ	(1)	(1)	(1)	(1)	(1)
Սլովենիա	(1)	(1)	(1)	(1)	(1)
<b>Ընդամենը (26)</b>	<b>56 (62)</b>	<b>54 (60)</b>	<b>43 (49)</b>	<b>38 (44)</b>	<b>38 (44)</b>

<sup>1</sup> Մթ. նոյեմբերին Քվեերում կայացած ՆԱՏՕ ԽՎ նստաշրջանում փոխվեց ԽՎ նախագահությունը:

<sup>2</sup> Մշտական հանձնաժողովում որոշումներ ընդունելիս՝ ներառյալ հավելյալ ծախսերը, անդամ պետությունների խորհրդարանականների քվեները, որպես կանոն, փոփոխման ենթակա չեն:

ՆԱՏՕ ԽՎ Բյուրոյի կազմը (նախագահությունը), մինչև 2006թ. նոյեմբեր

**Նախագահ**

**Ընտրվում է մեկ տարով, ունի մեկ անգամ վերընտրվելու իրավունք**

Պիեր Լելույե (Ֆրանսիա)	Ընտրվել է 50-րդ նստաշրջանին (Վենետիկ-2004թ. նոյեմբեր)	Վերընտրվել է
------------------------	---	--------------

**Փոխնախագահներ**

**Ընտրվում են մեկ տարով, ունեն մեկ անգամ վերընտրվելու իրավունք**

Ջոզեֆ Բանաս (Սլովակիա)	Ընտրվել է 50-րդ նստաշրջանին (Վենետիկ-2004թ. նոյեմբեր)	Վերընտրվել է
Վահիթ Էրդեմ (Թուրքիա)	Ընտրվել է 50-րդ նստաշրջանին (Վենետիկ-2004թ. նոյեմբեր)	Վերընտրվել է
Բերթ Քոհենդերս (Նիդերլանդներ)	Ընտրվել է 50-րդ նստաշրջանին (Վենետիկ-2004թ. նոյեմբեր)	Վերընտրվել է
Ժոզե Լելո (Պորտուգալիա)	Ընտրվել է 51-րդ նստաշրջանին (Կոպենհագեն-2005թ. նոյեմբեր)	Վերընտրվել է
Պիեր Կլաուդ (Կանադա)	Ընտրվել է 50-րդ նստաշրջանին (Վենետիկ-2004թ. նոյեմբեր)	Վերընտրվել է

**Գանձապահ**

**Ընտրվում է երկու տարով, ունի երկու անգամ վերընտրվելու իրավունք**

Լոթար Բրյուդեր (Գերմանիա)	Ընտրվել է 47-րդ նստաշրջանին (Օտտավա-2001թ. հոկտեմբեր) Վերընտրվել է 2003 և 2005թթ.	Վերընտրվել է
---------------------------	--	--------------

**Գլխավոր քարտուղար**

**Ընտրվում է երկու տարով, ունի երեք անգամ վերընտրվելու իրավունք**

Մինոն Լունն (Մեծ Բրիտանիա)	Ընտրվել է 43-րդ նստաշրջանին (Բուխարեստ-1997թ. հոկտեմբեր) Վերընտրվել է 2003թ., մանդատը ավարտվում է 2007թ. դեկտեմբերին	Վերընտրվել է
----------------------------	---	--------------

ՆԱՏՕ ԽՎ Բյուրոյի կազմը (նախագահությունը), (Քվեբեք-Կանադա, 2006թ. նոյեմբերից)

**Նախագահ**

**Ընտրվում է մեկ տարով, ունի մեկ անգամ վերընտրվելու իրավունք**

Բերթ Քոհենդերս (Նիդերլանդներ)	Ընտրվել է 52-րդ նստաշրջանին (Քվեբեք-2006թ. նոյեմբեր)	--
-------------------------------	--	----

**Փոխնախագահներ**

**Ընտրվում է մեկ տարով, ունի մեկ անգամ վերընտրվելու իրավունք**

Փոլ Է. Գիլմոր (ԱՄՆ)	Ընտրվել է 52-րդ նստաշրջանին (Քվեբեք-2006թ. նոյեմբեր)	--
Կառլ Ա. Լամմերս (Գերմանիա)	Ընտրվել է 52-րդ նստաշրջանին (Քվեբեք -2006թ. նոյեմբեր)	--
Ժոզե Լելո (Պորտուգալիա)	Ընտրվել է 51-րդ նստաշրջանին (Կոպենհագեն-2005թ. նոյեմբեր)	Վերընտրվել է
Միխայիլ Լուպոյ (Ռումինիա)	Ընտրվել է 52-րդ նստաշրջանին (Քվեբեք -2006թ. նոյեմբեր)	--
Ժան Փիթերսեն (Նորվեգիա)	Ընտրվել է 52-րդ նստաշրջանին (Քվեբեք-2006թ. նոյեմբեր)	--

**Գանձապահ**

**Ընտրվում է երկու տարով, ունի երկու անգամ վերընտրվելու իրավունք**

Լոթար Բրյուդեր (Գերմանիա)	Ընտրվել է 47-րդ նստաշրջանին (Օտտավա-2001թ. հոկտեմբեր) Վերընտրվել է 2003 և 2005թթ.	--
---------------------------	--	----

**Գլխավոր քարտուղար**

**Ընտրվում է երկու տարով, ունի երեք անգամ վերընտրվելու իրավունք**

Մինոն Լունն (Մեծ Բրիտանիա)	Ընտրվել է 43-րդ նստաշրջանին (Բուխարեստ-1997թ. հոկտեմբեր) Վերընտրվել է 2003թ., մանդատը ավարտվում է 2007թ. դեկտեմբերին	--
----------------------------	---	----

ՆԱՏՕ ԽՎ աստղացված անդամները, քվեները (Քվեբեք-Կանադա, 2006թ. նոյեմբերից)

Երկիր	Խորհրդարանական
Ռուսաստանի Դաշնություն	10
Ուկրաինա	6
Շվեդիա	5
Ավստրիա	5
Ադրբեջան	5
Շվեյցարիա	5
Ֆինլանդիա	4
Վրաստան	4
Խորվաթիա	3
Ալբանիա	3
Հայաստան	3
Մոլդովա	3
Մակեդոնիա	3
<b>Ընդամենը (13)</b>	<b>59</b>

Տվյալները հիմնված են ՆԱՏՕ ԽՎ պաշտոնական հրապարակումների վրա:

## МИЛИТАРИЗАЦИЯ ЮЖНОГО КАВКАЗА

Регион Южного Кавказа является одним из самых милитаризованных в мире. Расходы на оборону трех стран региона продолжают стремительно расти. Армения является одним из мировых лидеров по оборонным затратам в процентном отношении к ВВП: в последние годы Ереван строго придерживается отметки 3,5% от внутреннего валового продукта страны.

В 2006г. оборонные затраты Республики Армения составили 70348,7 млн армянских драмов, т.е. более \$160 млн. С точки зрения военных закупок укрепление армянского драма в течение года должно было положительно повлиять на увеличение военных закупок со стороны официального Еревана. На 2007г. в бюджете на оборону предполагается выделить более 100,4 млрд драмов, т.е. порядка \$280 млн.

Президент Азербайджана Ильхам Алиев поставил перед правительством задачу обойти военным бюджетом весь государственный бюджет Армении. «Я поставил задачу: наш военный бюджет должен быть равен всему бюджету Армении, а возможно превосходить его, так оно и будет», - заявил по этому поводу в 2005г. Ильхам Алиев. В 2006г. военные затраты Азербайджана должны составить порядка \$100 млн, а в 2007г. на оборону планируется потратить уже \$1 млрд.

Ранее, до прихода к власти Михаила Саакашвили Грузия являлась исключением для стран Южного Кавказа, имея очень незначительные расходы на армию. Во времена правления Эдуарда Шеварднадзе оборонный бюджет страны составлял порядка 0,2% ВВП. С приходом Саакашвили начался этап резкой милитаризации Грузии, военные расходы увеличились в разы – в 2005 и 2006 году они составили порядка 3,5% ВВП страны. В марте текущего года комиссия по безопасности парламента Грузии пришла с министерством обороны к соглашению о том, что оборонный бюджет страны не должен быть меньше 2% от ВВП.

Согласно ежегодному докладу Международного института проблем мира (SIPRI), в 2005г. Грузия стала мировым лидером по росту военных расходов. За год они выросли почти в 2,5 раза – до \$146 млн. В Армении этот показатель составил 23%, в Азербайджане – 51%. В 2006г. военный бюджет Грузии вырос до \$218 млн.

При этом надо учитывать, что, по оценкам экспертов, Армения и Азербайджан, например, реально тратят намного больше, используя внебюджетные средства. Так, в официальных отчетах Еревана не учитывается военная помощь Нагорно-Карабахской Республике. Кроме того, о серьезных внебюджетных вливаниях в армию можно судить и по заявлениям официальных лиц. Так, в 2005г. министр обороны Армении Серж Саркисян заявил, что Ереван сохранит паритет с Азербайджаном по расходам на оборону: «В 2005г. мы ни на один цент не отстанем от Азербайджана в расходах за оборону, а как и откуда будут найдены эти средства – это уже другой вопрос». Это при том, что официально в армянском бюджете в статье «военные нужды» была указана сумма в 57219,0 млн армянских драмов (около \$100 млн), а расходы Азербайджана составили порядка \$315 млн.

### *Численность армий, по данным IISS*

#### *The Military Balance 2006 (The International Institute for Strategic Studies, IISS)*

Грузия – 11 320 человек (7042 – армия, 1350 ВМС, 1350 ВВС, Национальная гвардия – 1578). Другие вооруженные формирования (внутренние и пограничные войска) – 11700 человек.

Азербайджан – 66740 человек (армия – 56840, ВМС – 200, ВВС – 7900). Другие вооруженные формирования (милиция и пограничные войска) – 15000 человек.

Армения 48160 человек (армия – 45000, ВВС – 3160). Другие вооруженные формирования (внутренние и пограничные войска) – 1000 человек.



*Данные о вооружениях Сухопутных сил, Военно-Воздушных и  
Военно-Морских войск стран Южного Кавказа*

Тип вооружений	Армения	Азербайджан	Грузия
Танки	110 (102 Т-72; 8 Т-54)	220 (120 Т-72; 100 Т-55)	86 (31 Т-72; 55 Т-55)
БМП	92 (80 БМП-1; 7 БМП-1К; 5 БМП-2 ), также 12 БРМ-1К	127 (20 БМД-1; 44 БМП-1; 41 БМП-2; 1 БМП-3 ), также 21 БРМ-1	78 (65 БМП-1; 13 БМП-2 ), также 11 БРМ-1К
БТР	140 (11 БТР-60; 21 БТР-70; 4 БТР-80; 104 – нет данных)	75 (25 БТР-60; 28 БТР-70; 11 БТР-80; 11 БТР-Д), а также 393 МТ-ЛБ	19 (1 БТР-60; 15 БТР-70; 3 БТР-80), а также 72 МТ-ЛБ
<b>Артиллерия</b>			
Гаубицы	59 - 122 мм; 62 – 152 мм.	80 - 122 мм; 52 – 152 мм.	60 - 122 мм; 14 – 152 мм.
Самоходные артиллерийские установки (САУ)	10 - 2С1 «Гвоздика»; 28 - 2С3 «Акация»	12 - 2С1 «Гвоздика»; 26 2С9 «Нона»	1 - 2С3 «Акация» 1- 2С7 «Пион»
Ракетные системы залпового огня (РСЗО)	47 – БМ-21 «Град»; 4 – WM-80;	53 – БМ-21 «Град»;	16 – БМ-21 «Град»;
Противотанковые ракетные комплексы	22 (13 «Штурм-С»; 9 «Конкурс»)	250 («Малютка», «Фагот», «Конкурс», «Метис»)	Нет точных данных
Минометы	19 122мм	47 120 мм	
<b>ВВС</b>			
Боевые самолеты	1 МиГ-25; 15 Су-25;	23 МиГ-25; 3 МиГ-25У; 4 МиГ-21; 6 Су-25; 5 Су-24; 4 Су-17; 2 Су-25 УБ	1 Су-25; 5 Су-25К; 5 Су-17
Транспортные самолеты	1 Ан-32; 2 Ил76	1 Ан-12; 3 Як-40	6 Ан-2; 1 Ту-134А; 2 Як-40
Учебные самолеты	4 Л-39; 10 Як-52	28 Л-29; 12 Л-39; 1 Су-17У	9 Л-29; 1 Як-18Т; 4 Як-52; 1 Су-25 УБ
Вертолеты	34 (16 Ми-24; 7 Ми-8; 2 Ми-9; 9 Ми-2)	35 (15 Ми-24; 13 Ми-8; 7 Ми-2)	17 (3 Ми-24; 4 Ми-8; 2 Ми-2; 8 УН-1Н «Ирокез»)

Кроме того, по данным *IISS*, на вооружении у внутренних войск Республики Армения находятся 55 бронемашин пехоты различного типа и 24 БТР. У пограничных войск на вооружении 43 БМП и 23 БТР.

Кроме того, по данным *IISS*, на вооружении у внутренних войск Азербайджанской Республики 7 БТР. У пограничных войск на вооружении 168 БМП и 19 БТР.

Войска ПВО Армении вооружены ЗРК С -75, 20 С-125, 18 «Круг», 9 «Оса». Кроме того, небо над Арменией совместно с армянскими силами патрулирует также система ПВО российской военной базы, на вооружении которой находятся ЗРК и «Куб».

У системы ПВО Азербайджана на вооружении стоят ЗРК С-75, С-125, С-200, «Круг», «Оса», «Стрела».

Система ПВО Грузии до недавнего времени основывалась лишь на различного вида ПЗРК, и лишь в 2005г. была постановлена на боевое дежурство первая ЗРК С-125.

В целом, данные *IISS* хоть и являются самыми полными по странам Южного Кавказа, в то же время они далеко не полностью отображают реальное положение дел.

Однако эти данные однозначно являются неполными, так как страны Южного Кавказа скрывают реальные объемы вооружений. Так, по оценкам экспертов, Азербайджан давно перешел квоты на обычные вооружения по фланговым ограничениям ДОВСЕ ОБСЕ. По заявлениям официальных лиц можно судить о том, что страны активно закупают вооружения. Частично это подтверждается и оценками Регистра вооружений ООН (*Register of Conventional Arms*) в 2005г. Азербайджан и Грузия провели ряд серьезных закупок.

*Закупки вооружений в 2005 году, по данным ООН*

	<b>Страна поставщик</b>	<b>Тип вооружений</b>	<b>Количество</b>
<b>Армения</b> (Нет данных)			
<b>Азербайджан</b>	Украина	Танки Т-72	25
	Беларусь	Танки Т-72	19
	Украина	БМП-1	2
	Украина	РСЗО «Смерч» 9А52	11
	Украина		
	Грузия	Самолеты СУ-25	6
	Грузия	Самолеты СУ-25УБ	1
<b>Грузия</b>	Чехия	Танки Т-72	35
	Украина	БТР-80	20
	Украина	БМП-2	12
	Украина	Арт-система «Акация»	6
	Чехия	Арт-система «Дана»	12
	Чехия	120 мм. минометы	25
	Вертолеты	2 - Ми-8 , 7 - Ми-24	9

Кроме того, в отчетах о вооружениях армянской стороны не учитываются данные об армии обороны Нагорно-Карабахской Республики, которые официально не публикуются. Однако, по сообщениям различных источников, в НКР на сегодняшний день количество вооружений по некоторым показателям превосходят Армению, хотя точность этих источников не подтверждена.

*Вооружения НКР*

Танки	БМП и БТР	Артиллерия от 122 мм.
316	324	322 44 РСЗО

Стоит отметить, что милитаризация в регионе идет не только на уровне гонки вооружений, огромных темпов увеличения военных расходов. Кроме всего прочего, генералитеты во всех трех странах ставят задачи по реформированию и модернизации армии.

*Самвел Мартиросян  
Фонд «Нораванк»*

# МНОГОУРОВНЕВАЯ ЕВРОПЕЙСКАЯ ИНТЕГРАЦИЯ АРМЕНИИ

## *Введение*

Процессы международной интеграции Армении в сфере безопасности необходимо рассматривать на нескольких важнейших уровнях, обуславливающихся разными целями структур, которые имеют специфические возможности. В статье будут рассматриваться состояние и перспективы влияния многоуровневой международной интеграции Армении с ведущими европейскими организациями в сфере повышения эффективности реформы сектора безопасности (РСБ), разрешения и предотвращения региональных конфликтов, формирования предпосылок долговременной стабильности на Южном Кавказе.

Вместе с тем надо учесть, что реальную возможность проведения РСБ для Армении в первую очередь дают две программы – *ENP (European Neighborhood Policy – Политика Европейского соседства)* и *IPAP (Individual Partnership Action Plan – План действий индивидуального партнерства)*, и, исходя из этого, очень важно определить и провести разграничение тех сфер РСБ, которые будут включены и будут развиваться в рамках данных программ<sup>1</sup>. То есть РСБ Армении максимально эффективно может осуществляться только в рамках сотрудничества страны с НАТО и ЕС.

В свою очередь, усилия по разрешению и предотвращению конфликтов можно эффективнее проводить с двумя другими европейскими организациями – СЕ и ОБСЕ, имеющими возможности, опыт и желание участвовать в урегулировании конфликтов на Южном Кавказе, миростроительстве, формировании режимов ограничения и контроля над вооружениями, «человеческого измерения» безопасности<sup>2</sup>.

## ***Армения – НАТО: РСБ, повышение оборонного потенциала и институционализация партнерства***

Первый уровень институциональной интеграции Армении составляют собственно процессы евро-атлантического сотрудничества Армении, подразумевающие военно-политические контакты страны с ведущей региональной организацией в сфере обеспечения безопасности на европейском континенте – НАТО. Этот процесс вступил в новую фазу для Армении после подписания и вступления в силу *IPAP*.

Взаимоотношения Армении с НАТО охватывают в первую очередь конкретно военное, военно-техническое и военно-политическое сотрудничество. Кроме общей реформы сектора безопасности, это сотрудничество также будет содействовать общему повышению военного потенциала вооруженных сил (ВС) Армении, тем самым способствуя достижению региональной стабильности и военно-политического баланса и, следовательно, большей предсказуемости Южного Кавказа.

В частности, формирование миротворческого батальона ВС Армении. Созданный и ныне действующий миротворческий батальон (который по положениям *IPAP* должен быть переформирован и усилен до размеров миротворческой бригады) следует рассматривать как наиболее ярое и успешное проявление такого сотрудничества. Во-первых, в его создании весьма важную роль сыграла помощь двух активных членов НАТО – США и Греции. Во-вторых, не секрет, что миротворческая бригада рассматривается военно-политическим руководством Армении как ядро будущих армянских ВС, соответствующих всем стандартам НАТО. В данном случае мы

<sup>1</sup> См. подробнее: *Авакян Г. Хискок Д.* Реформа сектора безопасности в Армении. Saferworld: London, 2005.

<sup>2</sup> См. подробнее: *Conflict Resolution in the South Caucasus: The EU Role* // International Crisis Group, Europe Report №173, 20 March 2006.

сталкиваемся с тем, как реальная военно-техническая и консультативная помощь со стороны НАТО содействует реальному военно-техническому сотрудничеству, перспективным реформам в структуре ВС Армении и тем самым сохранению реального военного баланса на Южном Кавказе. В условиях продолжающегося фактического военного противостояния с Азербайджаном у Армении нет другой такой возможности реформировать свои вооруженные силы без нанесения ущерба своей обороноспособности, как выполнение и имплементация *IPAP*. Следовательно, такая предметная военно-политическая интеграция Армении в рамках *IPAP*, кроме всего прочего, обеспечивает сохранение долговременной стабильности и безопасности в регионе Южного Кавказа.

### ***Армения – ЕС: военно-гражданские отношения, политическое измерение безопасности, «превентивное вовлечение»***

Второй уровень – это перспективы сотрудничества Армении в сфере безопасности с ЕС, что кроме реформы общего комплекса безопасности включает также региональную кооперацию, кризис-менеджмент, политическое планирование, совместную оценку угроз и рисков, сотрудничество между аналитическими и исследовательскими организациями в сфере стратегических исследований и проблем региональной безопасности.

Естественно, Армения на очень высоком уровне сотрудничает с ведущей организацией по обеспечению европейской безопасности – НАТО. Однако по мере развития военной составляющей ЕС, видимо, приближается время и для возможного активного сотрудничества и подключения Армении к ряду мероприятий в рамках *CFSP* (*Common Foreign and Security Policy – Общая внешняя и оборонная политика*) /*ESDP* (*European Security and Defence Policy – Европейская политика в сфере безопасности и обороны*). В частности, значительные возможности для сотрудничества в этой области открываются между сторонами концепцией «превентивного вовлечения» (*preventive engagement*) ЕС в установлении стабильности и безопасности вокруг его новых границ<sup>1</sup>.

Однако при этом не нужно забывать, что ЕС пока сам еще не в полной мере определился в своих приоритетах по сотрудничеству в сфере безопасности со странами, на которые распространяется политика «нового соседства». Поэтому для начала наиболее реальным представляется сотрудничество как в вопросах, имеющих первостепенное значение в рамках всей международной безопасности (нераспространение ОМП, борьба с терроризмом), так и в военно-гражданской деятельности европейской *CSDP* (политическое планирование и совместные исследования, военно-гражданские отношения, развитие военного законодательства, усиление парламентского контроля над вооруженными силами)<sup>2</sup>.

В сфере конфликтного урегулирования, учитывая большие ресурсные возможности ЕС, синхронность практической реализации *ENP* в этом контексте может включать меры по постконфликтной реабилитации пострадавших регионов: к примеру, разминирование, восстановление приграничных населенных пунктов, социальная помощь жертвам конфликта, беженцам и т.д. Отчасти указанные меры закреплены в Программе действий Армении по *ENP*, подписанной 14 ноября 2006г., однако существуют значительные сферы, где необходимо продолжение данной работы и закрепление в концептуальных документах и программах сотрудничества с ЕС.

### ***Армения – ОБСЕ: контроль над вооружениями, меры доверия по региональной безопасности, урегулирование конфликтов, «человеческое измерение» безопасности***

Третий уровень институциональной интеграции Армении в сфере безопасности – это сотрудничество с ОБСЕ. Универсальная ценность восприятия европейской безопасности в ее гуманитарном, экономическом и военно-политическом измерениях, свойственная ОБСЕ, спо-

<sup>1</sup> См. подробнее: *EU Security and Defense Policy: The First Five Years (1999-2004)* / Ed. By Gnesotto N. Paris: ISS-EU, 2004.

<sup>2</sup> См. подробнее: *Минасян С.* Армения и программа ЕС «Политика европейского соседства» // Центральная Азия и Кавказ, №6, 2005.

способствует тому, что эта организация выступает как важнейший общеевропейский форум по проблемам безопасности.

Продолжение работы над прогрессивным реформированием ОБСЕ, укреплением ее организационной системы и ее политико-правового инструментария в сферах раннего предупреждения, мер военно-политического доверия в рамках Венского документа, предотвращения конфликтов, регулирования кризисов и постконфликтного восстановления, позволит утвердиться организации в качестве важного коллективного субъекта всеобщей европейской безопасности. Большую важность представляет также роль ОБСЕ как организации, в рамках которой действует ДОВСЕ – краеугольный камень режима контроля и ограничения обычных вооружений в зоне ОБСЕ.

Для Армении важна также роль ОБСЕ в контексте мирного урегулирования Карабахского конфликта, где эта организация в лице Минской группы имеет важнейшее значение. И наконец, важна роль ОБСЕ для Армении в сфере безопасности также в проблемах «человеческого измерения» безопасности, в политической плоскости, военно-гражданских отношениях и парламентского контроля над ВС Армении.

### ***Армения – СЕ: правовые рамки профилактики региональных конфликтов, безопасность через демократизацию и сотрудничество***

Четвертый уровень составляет углубление институционального сотрудничества Армении в сфере безопасности с Советом Европы. Как и ОБСЕ, СЕ также увязывается с «человеческим измерением» безопасности, однако стандарты и механизмы СЕ создают также четкие правовые рамки, которые способны способствовать общей профилактике региональной напряженности – например, создание политико-правовых рамок защиты этнических меньшинств в государствах Южного Кавказа. В частности, полноценная имплементация и выполнение Грузией стандартов СЕ в сфере будет способствовать защите прав армянского этнического меньшинства в регионе Самцхе-Джавахети, снижению там конфликтогенности и тем самым, предотвращению и профилактики возникновения напряженности в межгосударственных отношениях Грузии и Армении<sup>1</sup>.

Другой важнейшей заслугой СЕ в сфере сохранения региональной стабильности является деятельность по недопущению возобновления боевых действий в зонах конфликтов на Южном Кавказе (в виде активной вовлеченности ПАСЕ в эту проблематику), содействие демократизации государств региона и их сотрудничеству.

### ***Заключение: перспективы и ограничители институциональной интеграции Армении***

Вместе с тем надо учитывать одну из особенностей политики Армении в вопросе ее евро-атлантической и европейской военно-политической интеграции и взаимоотношений с ведущими организациями в данной сфере. В отличие, например, от Грузии, где данный процесс характеризуется большей декларативной насыщенностью, регулярно проявляющейся в каждом действии, направленном на сотрудничество с НАТО, ЕС или в двустороннем формате с США, в Армении процесс принятия и осуществления решений в этом направлении несколько иной. Как справедливо отмечают представители высшего внешнеполитического руководства страны, особенность евро-атлантической и европейской интеграции Армении в том, что по каждому, пусть даже сравнительно небольшому шагу в сторону развития партнерства в этой области в Армении принимается политическое решение. Это обусловлено геополитической реальностью вокруг Армении, а также диктуется концептуальной основой армянской внешней и оборонной политики – комплементаризмом.

---

<sup>1</sup> См. подробнее: *Минасян С.* Этнические меньшинства Грузии: потенциал интеграции на примере армянского населения страны. СМІ: Ереван, 2006; Georgia's Armenian and Azeri Minorities // International Crisis Group, Europe Report №178, 22 November 2006.

Армении намного легче осуществлять интеграцию и сотрудничество с теми организациями, членом которых она уже является, – ОБСЕ и СЕ, чем другими, к максимальному увеличению контактов с которой она стремится – ЕС и НАТО. При этом важным сдерживающим фактором на данном этапе для Армении продолжают играть позиция России и членство РА в ОДКБ.

Учитывая эти факторы, необходимо осознание западными партнерами важнейшей особенности реалистического подхода Армении в ее процессах институциональной интеграции в европейские и евро-атлантические структуры – вначале достижение уровня соответствия страны минимальным техническим стандартам и лишь затем углубление ее полноценной интеграции с НАТО и ЕС.

Как это ни парадоксально, однако еще одним фактором, пока еще объективно ограничивающим полноценную интеграцию в сфере безопасности с НАТО, является необходимость сохранения баланса между долгосрочными перспективами в виде ценностных европейских устремлений Армении и высших приоритетов в сфере национальной безопасности нашей страны. В отличие от той же Грузии, которой фактически уже не на что надеяться, нечего терять и оглядываться на Россию в своих приоритетах в сфере безопасности, потому что она на определенный исторический период уже и так потеряла надежду на возвращение Абхазии и Южной Осетии, Армении есть что терять. Этим является то, что было и остается важнейшим приоритетом для национальных интересов Армении после восстановления независимости. И это называется Карабахом. Армения не желает рисковать этим краеугольным элементом своей национальной безопасности и поэтому максимально старается не ставить себя перед ситуацией «необходимости выбора», когда ускоренная интеграция с НАТО может повлечь за собой вероятность осложнения некоторых вопросов по Карабаху в силу неадекватной реакции на это как своего нынешнего партнера – России, так и возможных иллюзий по этому поводу у Азербайджана, способного в этом случае пойти на серьезный дрейф в сторону России.

Поэтому нынешний акцент на имплементацию стандартов, а не на декларативные шаги и эволюционные темпы углубления отношений с НАТО вполне соответствует как интересам Армении, так и достаточно позитивно воспринимаются ее западными партнерами. Тем более что технически, по сравнению с другими государствами Южного Кавказа, в вопросах евро-атлантической интеграции Армения реально находится практически на том же качественном уровне, что и Азербайджан (обе страны на стадии осуществления *IPAP*) и лишь на полшага отстает от Грузии (после формального завершения программы *IPAP* только в этом году перешедшей на стадию так называемого «активного диалога» с НАТО).

Не случайно поэтому, что действие *IPAP* для Армении, по заявлениям представителей военно-политического руководства страны<sup>1</sup>, рассчитано до 2015 г., т.е. до того срока, когда и руководство Армении и руководство Североатлантического альянса предполагают, что осуществление РСБ и соответствие ВС Армении стандартам НАТО с одной стороны и геополитические развития на Южном Кавказе – с другой, подведут к логическому итогу процессы институциональной евро-атлантической интеграции Армении и знаменуют качественно новый уровень ее взаимоотношений с этой организацией.

*Сергей Минасян*

---

<sup>1</sup> Армения в рамках *IPAP* планирует полностью реформировать систему обороны до 2015 года // [www.regnum.ru](http://www.regnum.ru), 12.04.2005.

## «АРМЯНСКИЙ ГАМБИТ»: ГИБКИЙ ПОДХОД К ПРЕВЕНТИВНЫМ ВОЗМОЖНОСТЯМ

Исходящие со стороны Азербайджана постоянные угрозы силового «разрешения» нагорно-карабахского конфликта обнаруживают существенные изъяны азербайджанской позиции в общем контексте урегулирования, которые, однако и к сожалению, не находят достойного идейного отпора с армянской стороны. Данная статья в сжатой форме нацелена на выявление указанных существенных изъянов, противоречий и общей неэффективности, прежде всего для самого Азербайджана, продолжения политики силового давления на другую сторону конфликта.

Своими угрозами военного пути разрешения конфликта Азербайджан – кроме того, что нарушает действующие принципы и нормы международного права, прежде всего основной принцип международного права: неприменение силы или угрозы силой – также вгоняет себя в политико-правовую ловушку. Экспертному сообществу уже продолжительное время известны конкретные аспекты силовой политики Азербайджана, находящиеся в жестком противоречии с действующими нормами международного права в частности и императивом компромиссного разрешения конфликтов в международных отношениях в целом. К данным явным аспектам силовой позиции Азербайджана, ведущим к общей одиозной позиции республики, можно отнести: 1) продолжающуюся блокаду армянской стороны, запрещенную нормами международного права и рассматриваемую последними как одно из проявлений агрессивной политики осуществляющего блокаду государства (государств); 2) общий фон позиции Азербайджана в контексте урегулирования конфликта, указывающий на «дух» военно-политических угроз и экономических рычагов давления, запугивания и шантажа; 3) не скрываемые, а наоборот – широко афишируемые военные амбиции в контексте доведения своего военного бюджета до размеров, выходящих за рамки оборонных целей, и общей политики военного строительства, выражающейся в однозначной направленности на **наступательную милитаризацию**, закупку **наступательных** видов вооружения; 4) конкретные проявления военно-политической позиции Азербайджана, ее нетранспарентности, имеющие непосредственное выражение, в частности, в осуществлении мониторинга на линии прекращения огня (например, продолжающаяся практика недопуска азербайджанской стороной должностных лиц ОБСЕ на свои передовые позиции по установленной линии прекращения огня).

Все указанное давно известно и с большей или меньшей эффективностью используется армянской стороной для привлечения соответствующего внимания задействованных в посредническом процессе государств и всего международного сообщества. Вместе с тем, по всей видимости, не вполне представляется и/или не вполне задействуется важный, с нашей точки зрения, блок аргументации, относящийся непосредственно к позиции НКР. Обозначенная выше силовая природа и направленность политики Азербайджана выстраивает для НКР выгодную систему предпосылок политико-правового свойства, которой необходимо придать правильный контекст и соответственно попытаться извлечь из нее максимальные выгоды в перспективе.

Силовые заявления азербайджанского руководства на всех уровнях, указанные выше конкретные проявления угрожающей военно-политической позиции азербайджанской стороны, преобладающая в временном интервале 1994 (окончание активной, военно-интенсивной фазы конфликта) и 2006 годов не только не спала, но и, по всей видимости, усилилась, приняв более завуалированные виды, дает НКР однозначные основания рассматривать нынешний этап «переговорного» процесса как неконструктивный ввиду позиции Азербайджана, который всеми своими заявлениями и действиями оттягивает время и выжидает удобного момента, чтобы вернуться к ситуации 1992г. (начало активной, военно-интенсивной фазы конфликта).

Со стороны НКР было бы по меньшей мере безответственно ожидать непосредственного вооруженного нападения Азербайджана в ситуации, когда присутствуют все признаки готовящегося военного преодоления установленной линии прекращения огня. Вместе с тем нынешний этап неоднозначной интерпретации международных норм в сфере права на самооборону, неопределенной и «державнозависимой» («что можно Юпитеру, не позволено быку») концепции права на превентивную оборону, сдерживающе-превентивного удара по агрессору обороняющимся субъектом, не дают основания говорить об исключительном праве НКР на превентивный удар в ситуации явно готовящейся наступательной операции со стороны Азербайджана. Для такого вывода нет как однозначных политико-правовых оснований в виде консенсусной позиции международного сообщества, выраженной в нормах общего международного права, так и отсутствует необходимая внутренняя материально-ресурсная база по выявлению скрытых передвижений мобильных сил, поступлению соответствующей развединформации самого оперативного свойства (спутниковое слежение, высокотехнологичные электронно-оптические средства наблюдения и контроля для раннего оповещения и т.п.). Более того, очевидно, что превентивные удары со стороны НКР, даже в случае доказательно подкрепленного представления для международного сообщества фактов готовящейся наступательной операции со стороны Азербайджана, будут иметь однозначно негативную оценку со стороны подавляющего числа государств.

С нашей точки зрения, для НКР важен вопрос максимально эффективного военного удержания своих оборонительных рубежей, которое бы сочеталось с возможностью контрнаступательных операций по отбросу противника и занятием новых территорий в качестве компенсации за осуществленное Азербайджаном широкомасштабное нарушение режима прекращения огня.

Речь идет о наиболее максимальном и эффективном использовании армянской стороной последствий такого нападения со стороны Азербайджана во всех плоскостях возможных последствий для агрессора (политической, правовой, экономической и военной). Нарушив режим прекращения огня в одностороннем порядке, Азербайджан вгоняет себя в ловушку политико-правового свойства. Подписав в 1994г. соглашение о прекращении огня и признав тем самым незаменимую роль НКР в заключении данного документа, его исполнении и дальнейшем усовершенствовании<sup>1</sup>, Азербайджан в дальнейшем, с 1994 по 2006 годы, сделал все, чтобы исключить НКР из числа субъектов, с которыми он намерен заниматься политическим урегулированием конфликта. Отсюда очевидность позиции Азербайджана, которая легко доказуема из фактологического материала последних 12 лет: Азербайджан рассматривает и признает НКР как военную силу, без первостепенного участия которой не могло быть осуществлено прекращение огня в 1994г., но не признает ее как политическую силу, без которой невозможно достичь разрешения конфликта. Абсурдность такой позиции Азербайджана настолько велика, что не имеется аналогичных примеров в практике международных конфликтов, когда бы одна из сторон конфликта признавала военную субъектность оппонента, но не вела бы с ним переговоры и тем самым не признавала его политическую персонифицированность в поствоенный период. Если Азербайджан возобновит военные действия, то он вернется к ситуации 1994г., и все его сомнительные победы на дипломатическом фронте будут поставлены в исключительную зависимость от непредсказуемости на фронте военном.

Свою подпись в Бишкекском протоколе 1994г. Азербайджан может дезавуировать (отказаться от нее), если пойдет на одностороннее нарушение норм, закрепленных в данном документе. Однако это будет иметь негативные последствия прежде всего для самого нарушителя: после этого международная субъектность НКР будет признаваться не только в терминах *де-факто* военного свойства, но получит свое зримое воплощение и в терминах *де-юре*, ибо подпись НКР под соглашением о прекращении огня превращается в ее реальную правовую способность, основанную на принципах и конкретных нормах международного права, остановить нарушителя договоренностей, используя свое право на самооборону, и в своих дальнейших действиях по отношению к нарушителю договоренностей (агрессору) исходить в первую очередь из самого факта осуществленного агрессором срыва договоренностей. Реанимация воен-

<sup>1</sup> Соглашение по укреплению режима прекращения огня в нагорно-карабахском конфликте (6 февраля 1995г.).



ной фазы конфликта с необходимостью возвращается к политико-правовой ситуации 1994г., которая, как представляется, позабыта многими. Сухим и лаконичным «остатком» такой ситуации будет то, что субъектность НКР станет рассматриваться в терминах «незаменимого субъекта» для приостановления очередной фазы агрессивной политики Азербайджана. Легко предугадываемые обсуждения на заседаниях Совета Безопасности (СБ) ООН выявят следующие «неблагоприятности» для Азербайджана: 1) США, Россия и Франция, будучи постоянными членами СБ и одновременно являясь сопредседателями Минской группы ОБСЕ, не могут не отреагировать адекватно на такие «вольности» одной из сторон конфликта. Великобритания, как еще один постоянный член СБ, также не заинтересована в таких «вольностях» со стороны партнера, на территории которого осуществляются долгосрочные нефтяные проекты с ее участием. Позиция Китая при таком раскладе не может кардинально отличаться от позиции других постоянных членов СБ – во всяком случае, не настолько, чтобы задействовать свое право вето на резолюцию об осуждении одностороннего нарушения режима прекращения огня; 2) практика принятия последних резолюций СБ ООН, посвященных восстановлению «довоенного» статус-кво (например, резолюция №1701 от 11 августа 2006г., остановившая военные действия между Израилем и *Хизбаллой*), свидетельствует об общности позиции постоянных членов СБ в вопросе неприемлемости эскалации вооруженной фазы и невозможности кардинального изменения военно-политических позиций конфликтующих сторон по итогам данной вооруженной фазы противостояния (если Израилю не удалось «поставить на колени» негосударственного (или, точнее, квазигосударственного) субъекта в лице *Хизбаллы* при всем сопутствующем временном и дипломатическом «льготном режиме» со стороны США, то что говорить об Азербайджане, который хочет «поставить на колени» состоявшегося государственного субъекта с самой боеспособной армией в регионе и самым патриотичным духом населения)<sup>1</sup>.

В заключение отметим, что практика международных конфликтов последних лет требует развернутого уточнения всех возможных последствий, вытекающих из права на самооборону, и выражения четкой и подкрепленной правовыми нормами позиции международного сообщества по вопросу легитимности условий применения превентивных ударов в контексте осуществления права на самооборону.

Предпринятые в данном направлении попытки<sup>2</sup> не получили своего развития в дальнейшем, и на сегодняшний момент приходится констатировать большее наличие вопросов, чем ответов по данной проблематике<sup>3</sup>. Свою роль в разрешении этого вопроса может сыграть Меж-

---

<sup>1</sup> «В Азербайджане утверждают, будто применение им силы в ответ на оккупацию ряда районов соответствовало бы международному праву, праву на самооборону. Но совершенно очевидно, что это стало бы нарушением целого ряда международных обязательств АР: 1) Устава ООН (статьи 33 и 37 предусматривают мирное разрешение споров, статья 51 признает право на самооборону, «если произойдет вооруженное нападение» и пока СБ ООН не предпримет мер); 2) принципов ОБСЕ о мирном разрешении споров, неприменении силы и угрозы силой; 3) заверений решить карабахский конфликт мирным путем, сделанных АР и РА при вступлении в Совет Европы; соглашения о прекращении огня, которое не имеет срока действия и в целом соблюдается сторонами уже более 10 лет.

У Азербайджана нет реальных ресурсов для «блицкрига»: нельзя быстро и успешно провести военные действия, не имея кратного превосходства сил над противником, а его нет, оно и не просматривается. А затяжная война сопряжена с непредсказуемыми рисками не только для руководителей молодого государства, но и для него самого, не говоря уже о несоизмеримых жертвах и тяготах, о новом истязании собственного народа. Кое-кто теплит нехитрый план «встряхнуть» международное сообщество «короткой» военной акцией, припугнуть его, чтобы добиться на этом большего сочувствия и уступок. Опыт учит, что легче начать, чем кончить. Последствия такой акции могут стать и прямо противоположными авантюристическим расчетам, привести к изоляции АР на международной арене» (*Владимир Казимиров*, Аналитические записки Научно-координационного совета по международным исследованиям МГИМО (У) МИД России, Выпуск 1(3), январь 2005, <http://www.mgimo.ru/files/2004/nauka/az-03.pdf>).

<sup>2</sup> Доклад Группы высокого уровня по угрозам, вызовам и переменам, сделанный в 2004г. группой экспертов ООН указал на многие положения возможного усовершенствованного восприятия права на самооборону, закрепленного в ст. 51 Устава ООН. В данном контексте отметим следующие положения Доклада: «... если есть веские аргументы в пользу превентивных военных действий и веские доказательства в их подтверждение, они должны быть доведены до сведения Совета Безопасности, который может санкционировать такие действия, если сочтет это необходимым. Если он не сочтет это нужным, то, по определению, будет время для того, чтобы использовать другие стратегии, включая убеждение, переговоры, удержание, и затем вновь рассмотреть вариант военных действий (пункт 190 Доклада); При рассмотрении вопроса о том, санкционировать ли или одобрить ли применение военной силы, Совет Безопасности должен всегда учитывать – независимо от других соображений, которые он может принять во внимание, – по крайней мере следующие пять базовых критериев легитимности: **а) серьезность угрозы, б) правильная цель, в) крайнее средство, г) соразмерность средств, д) сбалансированный учет последствий**» (пункт 207 Доклада).

<sup>3</sup> Существует, например, следующая достаточно авторитетная точка зрения: «Некорректно утверждение: «По ст. 51 Устава ООН каждое государство обладает неотъемлемым правом на индивидуальную или коллективную самооборону». В самой же статье ясно, однозначно говорится, что это – неотъемлемое право самого государства и Устав, сама ООН не имеют к нему никакого отношения. То есть право это не по Уставу, не по ст. 51 существует, а собственной силой. Равным образом некорректно, ссылаясь на ст. 51, утверждать, что указанным правом государство может воспользоваться только в случае, если на него произойдет вооруженное нападение. Нет этого условия в данной статье. Все, о чем там говорится, так это о том, что Устав ООН ни в коей мере не затрагивает

дународный суд ООН, в качестве наиболее авторитетного международного судебного органа, занимающегося толкованием международных норм и имеющего потенциал по возможному восполнению пробелов в международном праве путем установления правовых прецедентов в межгосударственных отношениях (разрешение схожих межгосударственных споров, в результате чего делаются правовые выводы, воспринимаемые заинтересованными государствами как правовые прецеденты, которых следует придерживаться в своих действиях).

«Из критериев самообороны, которые следовало бы учитывать при изучении допустимости одностороннего упреждения силой, признанными являются принципы необходимости и соразмерности. Международный суд ООН ссылаясь на них, в частности, в таком деле, как «Никарагуа против Соединенных Штатов Америки» (1986). В данном деле Суд установил порог интенсивности применения военной силы на уровне «простого пограничного инцидента», превышение которого позволяет говорить о вооруженном нападении в смысле статьи 51 Устава ООН. Кстати, в том же постановлении Суд дважды заметил, что спорящие стороны «не поднимали вопроса о законности ответа на неминуемую угрозу вооруженного нападения. Соответственно Суд не высказывает каких-либо взглядов по данному поводу». Суд явно намекал, что если бы такой вопрос был задан, он высказался бы и по нему. Возможно, именно Международный суд ООН, опираясь на собственный инструментарий правовых средств, мог бы предложить современные критерии в связи с правомерностью одностороннего военно-силового упреждения. При этом не обязательно дожидаться, пока возникнет межгосударственный спор, разрешая который Суд изложит свою правовую позицию. В его распоряжении есть и такой прием, как консультативное заключение по вопросу права вне рамок какого-либо спора. Правда, запрашивать такое заключение уполномочены только Совет Безопасности, Генеральная Ассамблея или – с разрешения Генеральной Ассамблеи – иные органы и специализированные учреждения Организации Объединенных Наций»<sup>1</sup>.

В заключение считаем уместным отметить следующие факты. Помимо того, что консультативное заключение Международного суда ООН не является юридически обязательным, и рассматривается как правовое мнение авторитетного международного судебного органа, ни Республика Армения, ни Азербайджанская Республика не признают обязательную юрисдикцию Международного суда ООН даже с оговорками. На этом фоне рассуждения некоторых азербайджанских экспертов выглядят по меньшей мере некомпетентными<sup>2</sup>. Чтобы Азербайджан мог передать «карабахский» спор в Международный суд ООН необходимо, чтобы Армения признавала в отношении себя обязательную юрисдикцию данного Суда (о чем говорится в части 2 статьи 36 Статута Международного суда ООН). Данное признание оформляется в виде специального заявления, передаваемого на хранение Генеральному секретарю ООН. А может, Азербайджан будет рассматривать своим оппонентом в Международном суде не Армению, а НКР!? Но тогда это совсем другая история.

*Михаил Агаджанян*

---

наличие этого права в связи с вооруженным нападением. Никак нельзя выставлять указанную формулу как условие возникновения права на самооборону. Иное дело, что государство обязано немедленно информировать Совет Безопасности о самостоятельно принятых мерах в порядке присущего ему права на самооборону и в дальнейшем действовать односторонне лишь до тех пор, пока Совет Безопасности не примет мер, необходимых для поддержания международного мира и безопасности. Это понятно. Как должно быть понятно и то, что Совет Безопасности может оказаться парализованным в результате veto хотя бы одного из его постоянных членов, что случалось уже около 300 раз, и тогда государство продолжает применять меры самообороны полностью самостоятельно» (Малеев Ю.Н. (доктор юридических наук, профессор кафедры международного права МГИМО (У) МИД РФ), Силовая составляющая международного права, <http://www.sudrf.ru/modules.php?name=international&op=showtext&tid=21&id=23>).

<sup>1</sup> Тузмухамедов Б.Р., Упреждение силой: «Каролина» и современность // «Россия в глобальной политике», №2, март-апрель 2006 <http://www.globalaffairs.ru/numbers/19/5550.html>.

<sup>2</sup> «Если переговоры под эгидой Минской группы ОБСЕ потерпят неудачу, Азербайджан должен рассматривать возможность использования Международного суда (МС) в соответствии со Статьей 36, параграфа 1 Устава Суда. Азербайджан, как и Армения, подписавшая Пакт ООН, в соответствии со Статьей 93 параграфа 1 и, в силу самого этого факта, присоединилась к Уставу МС» (Рауф Раджабов, Косовский прецедент для Нагорного Карабаха, <http://www.regnum.ru/news/734293.html>, 06.11.2006).

Состав непостоянных членов Совета Безопасности ООН на 2007 год

1. Бельгия (до 31 декабря 2008г.)
2. Гана (до 31 декабря 2007г.)
3. Индонезия (до 31 декабря 2008г.)
4. Италия (до 31 декабря 2008г.)
5. Катар (до 31 декабря 2007г.)
6. Конго (до 31 декабря 2007г.)
7. Панама (до 31 декабря 2008г.)
8. Перу (до 31 декабря 2007г.)
9. Словакия (до 31 декабря 2007г.)
10. Южная Африка (до 31 декабря 2008г.)

Государства, признающие обязательную юрисдикцию  
Международного Суда ООН (с оговорками или без них)<sup>1</sup>

1. Австралия	12. Гвинея-Бисау	23. Камерун	34. Мадагаскар	45. Панама	56. Суринам
2. Австрия	13. Гондурас	24. Канада	35. Малави	46. Парагвай	57. Того
3. Барбадос	14. Греция	25. Кения	36. Мальта	47. Перу	58. Уганда
4. Бельгия	15. Грузия	26. Кипр	37. Мексика	48. Польша	59. Уругвай
5. Болгария	16. Дания	27. Коста-Рика	38. Науру	49. Португалия	60. Филиппины
6. Ботсвана	17. Дем. респ. Конго	28. Кот-д'Ивуар	39. Нигерия	50. Свазиленд	61. Финляндия
7. Великобритания	18. Доминик. респ.	29. Лесото	40. Нидерланды	51. Сенегал	62. Черногория
8. Венгрия	19. Египет	30. Либерия	41. Никарагуа	52. Сербия	63. Швеция
9. Гамбия	20. Индия	31. Лихтенштейн	42. Новая Зеландия	53. Словакия	64. Швейцария
10. Гаити	21. Испания	32. Люксембург	43. Норвегия	54. Сомали	65. Эстония
11. Гвинея	22. Камбоджа	33. Маврикий	44. Пакистан	55. Судан	66. Япония

<sup>1</sup> По данным на июль 2004 года, в соответствии с источником: *The International Court of Justice*, Hague, 2004, <http://www.icj-cij.org/icjwww/igeneralinformation/ibleubook.pdf>.

## ՉԻՆԱՍՏԱՆԻ ՆԱՎԹԱԳԱԶԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Վերջին տասը տարիների ընթացքում Չինաստանում նկատվում է նավթի և գազի օգտագործման կտրուկ աճ՝ պայմանավորված վերջինիս տնտեսության զարգացման արագ տեմպերով: Հետևաբար, աճում են նաև նավթի ներկրումն արտերկրից և գազի ներկրման հեռանկարային ծրագրերի իրագործման անհրաժեշտությունը:

Չինաստանը բավական իրատեսորեն է գնահատում նավթ և գազ արտահանողներից կախվածության վտանգը: Սա ստիպում է Պեկինին ակտիվ ներդրումային ծրագրեր իրականացնել նավթ և գազ մատակարարող երկրների էներգետիկ շուկայում, ինչը միտված է լուծելու 2 հիմնական խնդիր.

- ապահովել Չինաստանի մասնակցությունը համաշխարհային էներգետիկ շուկայում,
- սահմանափակել նավթ և գազ արտահանող պետությունների և դրանց դաշնակիցների ազատ գործելու հնարավորությունները և դրանով իսկ կայունացնել նավթի և գազի ներկրումը Չինաստան:

Ստորև կանդրադառնանք Չինաստանի այն հիմնական էներգետիկ ներդրումային ծրագրերին, որոնք իրագործվում են Մերձավոր Արևելքում: Նշենք, որ Մերձավոր Արևելքը հանդիսանում է այն հիմնական աղբյուրը, որտեղից Չինաստանը նավթ է ներկրում: Մերձավոր Արևելքի նավթը 2030-ին կարող է կազմել Չինաստան ներկրվող նավթի 84%-ը:

### 1. Մերձավոր Արևելք

#### *Իրան*

Չնայած բավական տարածված կարծիքին՝ ուղիղ կամ արտոնյալ կարգավիճակով ներդրումների հնարավորություն Իրանի կառավարության կողմից Չինաստանը չի ստացել: Ինչպես և բոլոր օտարերկրյա ընկերությունները, չինական ընկերությունները նույնպես Իրանում աշխատում են «հետգնման» (*buyback*) ներդրումային սկզբունքի հիման վրա: Այս սկզբունքը մշակվել է դեռ 1990-ական թթ. սկզբին, Իրանի նախկին նախագահ Ա.Ա.Հաշեմի-Ռաֆսանջանի ակտիվ մասնակցությամբ, և նրա հիմնական առանձնահատկությունն է. արտասահմանյան ընկերությունները մշակում և զարգացնում են նավթի կամ գազի հանքավայրը մինչև այն պահը, երբ այդ հանքավայրերից արդեն հնարավոր կլինի սկսել արդյունահանումը: Դրանից հետո այդ հանքավայրերը տրամադրվում են Իրանի Ազգային նավթային ընկերությանը (ԻԱՆԸ), որը տնօրինում և ղեկավարում է դրանք՝ դառնալով միակ սեփականատերը: Իսկ արտասահմանյան ընկերությունները, որոնք ներդրումներ են իրականացնում Իրանում, իրենց կատարած ծախսերը և որոշակի շահույթը ստանում են արդեն ԻԱՆԸ-ի կողմից՝ ի դեմս նավթի անվճար մատակարարման:

Չինաստանի կողմից «հետգնման» սկզբունքով Իրանում իրականացվող հեռանկարային հիմնական ներդրումը կարող է համարվել *Յադավարանի* նավթագազային հանքավայրի մշակումը և այնտեղ գազի հեղուկացման գործարանի կառուցումը: Այս հանքավայրի զարգացման մասին Իրանը և Չինաստանը 2004թ. հոկտեմբերին ստորագրել են հոչակագիր, համաձայն որի՝ հանքավայրի զարգացումից հետո Չինաստանն իրավունք և պարտավորություն կունենա այդտեղից գնել օրական 150 հազ. բարել նավթ և տարեկան 10 մլն տ հեղուկացված գազ՝ զալիք 25 տարիների ընթացքում: Բացի դրանից, Չինաստանը պարտավորվում է Բենդեր-Աբաս նավահանգստի շրջակայքում կառուցել գազի կոնդենսացման գործարան՝ \$1,5 մլրդ արժողությամբ:

Սակայն հարկ է նշել, որ հռչակագրից բացի ոչ մի կոնկրետ պայմանագիր Իրանի և Չինաստանի միջև չի կնքվել: Աշխատանքների սկսման մասին պայմանագրի ստորագրումը հիմնականում հետաձգում է իրանական կողմը:

Մյուս չինական հեռանկարային ծրագիրն Իրանում կարելի է համարել **Ազադեզան** նավթավայրի զարգացումը: Այստեղ գործող միջազգային կոնսորցիումում Չինաստանի չափաբաժինը կազմում է միայն 25%: Սակայն 2005-ին լուրեր տարածվեցին, թե Ճապոնիան, որը նախագծում 50% բաժին ունի, կարող է հեռանալ ծրագրից: Հիմնականում մատնանշվում էր ծրագրից դուրս գալու 2 պատճառ.

- Ճապոնիան ցանկանում է հեռանալ Իրանից ԱՄՆ-Իրան հնարավոր պատերազմից առաջ,
- Իրանն ինքն է դուրս մղում Ճապոնիային՝ ծրագիրը Չինաստանին հանձնելու նպատակով:

2006-ի հոկտեմբերին Իրանը Ճապոնիայի չափաբաժինը ծրագրում նվազեցրեց մինչև 10%-ի՝ կապված Ճապոնիայի կողմից սարքավորումների մատակարարման դանդաղ ընթացքի հետ: Սակայն այդ ազատված չափաբաժինը դեռևս չի տրամադրվել Չինաստանին: Ըստ վերջին տեղեկատվության՝ այս նախագծի շուրջ Իրանը բանակցություններ է սկսել Հնդկաստանի հետ:

### **Իրաք**

Մինչև Հուսեյնի վարչակազմի տապալումը ԱՄՆ կողմից, Չինաստանն Իրաքի հետ կնքել էր պայմանագիր Իրաքի հարավում գտնվող **Ալ-Ադհաբ** նավթավայրի մշակման և զարգացման վերաբերյալ: Այս հանքավայրը հնարավորություն կտար արդյունահանել օրական մինչև 90 հազ. բարել նավթ:

2004-ին Իրաքի նոր կառավարությունը հայտարարեց, թե հրաժարվում է Չինաստանի հետ սադամյան Իրաքի նավթային պայմանագրերից: Սակայն 2006-ի հոկտեմբերի վերջին հատուկ այցով Պեկին ժամանեց Իրաքի նավթի նախարար Հուսեյն ալ-Շահրիստանին: Չին-իրաքյան բանակցությունների հիմնական թեման **Ալ-Ադհաբ** նավթավայրի մշակման վերաբերյալ պայմանագրի վերահաստատումն էր: Համաձայն վերջին տեղեկատվության՝ էներգետիկայի ոլորտում համագործակցության չին-իրաքյան միջպետական պայմանագիրը նախատեսվում է ստորագրել 2007թ. սկզբին:

### **Օման**

Օմանը Չինաստան նավթ արտահանող հիմնական պետություններից է: Սակայն չինական կապիտալի մուտքը Օմանի էներգետիկ շուկա տեղի է ունենում բավական դանդաղ:

2002թ. չինական **Մինսպեկը** ստանձնեց առաջին փոքր հանքավայրի կառավարումն Օմանում: Կառավարման իրավունքները Չինաստանը գնեց ճապոնական ընկերություններից: 4 տարվա ընթացքում նավթի արդյունահանումն այս հանքավայրից չինացիների կողմից 2 հազ. բարելից օրական հասցվեց 12 հազ. բարելի:

2004թ. օգոստոսին Չինաստանն առաջին անգամ իրավունք ստացավ մասնակցել Օմանի նոր հանքավայրերի մշակմանը: Ըստ ստորագրված չին-օմանյան պայմանագրի՝ Չինաստանը սկսելու է Օմանի, այսպես կոչված, «հարավային մեծ հանքավայրի» 36-րդ և 38-րդ բլոկների մշակումը: Այն բանից հետո, երբ այստեղ կսկսվի նավթի արդյունահանումը, Չինաստանը կկառավարի այս հանքավայրը 3 տարի ժամկետով և իր կատարած ծախսերի դիմաց այդ 3 տարիների ընթացքում ամբողջությամբ և անվճար կստանա այստեղ արդյունահանվող ողջ նավթը:

Միննույն ժամանակ, Չինաստանը նշանակալի գումարներ է ներդնում Օմանում նավթաքիմիական արդյունաբերության զարգացման ոլորտում: Ներկայումս չինացիներն Օմանում կառուցում են մեկ նավթաքիմիական գործարան և 2 ուսումնական կենտրոն: Ընդհանուր չինական ներդրումներն Օմանի էներգետիկ ոլորտում անցնում են \$600 մլն-ն: Ընդհանուր ներդրումներն Օմանի տնտեսության մեջ գերազանցում են 1 մլրդ-ը:

### **Եմեն**

Եմենի ղեկավար Ալի Աբդուլլա Սալեի՝ 2004թ. Պեկին կատարած պաշտոնական այցի շրջանակներում ստորագրվեցին համաձայնագրեր էներգետիկ ոլորտում համագործակցության հաստատման վերաբերյալ: Չինաստանն այսօր Եմենում իրականացնում է նավթային

երկու նոր հանքատեղիների մշակումը: Նավթի արդյունահանումը կսկսվի 2007-ին, որի ծավալները, սակայն, այնքան էլ մեծ չեն լինի:

Չինաստանի ներդրումները Եմենի էներգետիկ ոլորտում հասնում են \$80 մլն-ի: Ընդհանուր ներդրումներն Օմանի տնտեսության մեջ գերազանցում են \$200 մլն-ն:

Ընդհանուր առմամբ Չինաստանի ներդրումները Մերձավոր Արևելքի նավթի ոլորտում կազմում են մոտ \$2 մլրդ: Չնայած սրան, Չինաստանի ակտիվները տարածաշրջանում ընդհանուր առմամբ մեծ չեն և, օրինակ, իրենց ընդհանուր քանակով զիջում են Ճապոնիայի ակտիվներին ավելին քան 5 անգամ: Ընդհանուր առմամբ Պեկինի ջանքերը՝ ուժեղացնել սեփական էներգետիկ ազդեցությունը տարածաշրջանում, ավարտվում են միայն հարաբերական հաջողությամբ: Ինչն էլ ստիպում է Չինաստանին ակտիվացնել սեփական քայլերը Կենտրոնական Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի, Վենեսուելայի և Կասպիցի ուղղություններով:

*Սեակ Սարուխանյան  
«Նորավանք» հիմնադրամ*

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Քննության ենթարկվող թեման, չնայած մի քանի ամսվա վաղեմությանը, չի կորցրել արդիականությունը: Խոսքը Վրաստանի Իսլամական դեմոկրատական կուսակցության ստեղծման մասին է, որը հռչակվեց Թուրքիայի Էրզրում քաղաքում 2006թ. հունիսի 20-ին: Վերջնական փաստաթուղթը (բացի ներկա գտնվող արխիվներից) ստորագրեցին Վրաստանի մահմեդական հիմնական էթնոդավանական խմբերի ներկայացուցիչները՝ ադրբեջանցիներ, մահմեդական օսեր, վրացիներ, չեչեններ, ինգուշներ, թուրք մսիխեցիներ և աջարներ (նշենք, որ Վրաստանում ապրում են իսլամադավան այլ խմբեր ևս՝ ավարներ, թաթարներ, դազախներ, ուզբեկներ և թաջիկներ): Հանդիպմանը, որին մասնակցում էին 80 պատվիրակներ, որոշվեց ստեղծել աշխատանքային խումբ, որը կկազմակերպեր Իսլամական դեմոկրատական կուսակցության հիմնադիր համագումարը: Նորաթուխ կուսակցության պլատֆորմը և ձգտումները դեռևս հստակ չեն: Սակայն նմանօրինակ կուսակցության ստեղծումն ինքնին կարևոր քայլ է և վկայում է Վրաստանի մահմեդականների ակտիվացման և համախմբվելու կարողության մասին: Այս տեսանկյունից կարևոր է Վրաստանում իսլամական գործունի և իսլամական համայնքներին վերաբերող հիմնահարցերի հետազոտությունը:

Իսլամը Կովկաս է թափանցել դեռևս 7-րդ դարում: Հետագայում, երբ 16-րդ դարի երկրորդ կեսին տարածաշրջանի նկատմամբ հավակնություններ հանդես բերեց նաև Օսմանյան կայսրությունը, իսլամը տարածվեց նաև թուրքերի միջոցով: Ասվածի ապացույցն է թուրքերի կողմից քրիստոնյա արխիվների բռնի հավատափոխությունը:

1989թ. Վրաստանում մահմեդականները կազմում էին ընդհանուր բնակչության 12%-ը (ավելի քան 640 հազ.): Այսօր մահմեդականների մոտավոր թիվը նվազել է և գնահատվում է 400 հազ., ինչը կապված է մահմեդականների արտագաղթի, իսկ որոշ դեպքերում էլ՝ իսլամական ինքնության կորստի հետ:

Վրաստանի մահմեդականների շրջանում էլ տարածված են իսլամի սուննի, շիա ուղղությունները և սուֆիականությունը, իսլամական իրավական դպրոցներից տարածված է շաֆիականությունը:

1990-ականներից ի վեր հետխորհրդային հանրապետություններում ազգային և կրոնական ընկալումների վերաբժնորման արդյունքում իսլամի արմատավորումը հիմնականում ընթացավ յուրաքանչյուր հանրապետությանը հատուկ հանգամանքներում՝ առանձին դեպքերում կրելով միջազգային իսլամական կենտրոնների ազդեցությունը: Ի տարբերություն իսլամի ավանդական տարածման շրջանների, որտեղ իսլամը դերակատարում ունի նաև սոցիալ-քաղաքական կյանքում, հետխորհրդային տիրույթում, այդ թվում՝ Վրաստանում, այն հիմնականում պայմանավորում է հասարակության ավանդույթային և կենցաղային կողմերը: Պատահական չէ, որ հետխորհրդային շրջանում իսլամական ինքնագիտակցության բարձրացումն ավելի շատ ընթացավ ազգային համատեքստում:

Ընդհանուր առմամբ, Վրաստանում քրիստոնեական մեծամասնությունը և մահմեդական փոքրամասնությունը գոյատևել են խաղաղ և փորձել են համատեղ պայքարել տարածաշրջանում իրենց դիրքերն ամրապնդող Ռուսաստանի, Պարսկաստանի և Օսմանյան կայսրության դեմ: Սակայն 1991-ից՝ Վրաստանի անկախացումից ի վեր, էթնոդավանական բարդ խճանկար ունեցող այս երկրում ի հայտ եկան մի շարք ազգային հիմնահարցեր (որոնց մեջ իրենց հիմնարար տեղն ունեն Աբխազիայի, Հարավային Օսիայի, Ջավախքի, Աջարիայի խնդիրները):

Ի տարբերություն իսլամի ավանդական տարածման շրջանների, կրոնականությունը Վրաստանում բարձր ցուցանիշ չունի: Սակայն վերջին հարցումները ցույց են տալիս, որ Ադրբեջանի համեմատությամբ Վրաստանն առավել կրոնական է: Վրաստանում տարբերակում են իսլամադավան չորս խմբի ներկայացուցիչների:

Առաջին խմբի ներկայացուցիչներն, այսպես կոչված, «բարեպաշտ մահմեդականներն» են, ովքեր հետևում են իսլամական ծիսակարգին՝ ծով են պահում (Ռամադանի վերջում նշում են ուրազա բայրամը), աղոթում են հինգ անգամ, իրականացնում բարեգործության պարտադիր գործառույթներ, նշում զոհաբերության տոնը (կուրբան բայրամ), պարբերաբար Ղուրան են ընթերցում:

Երկրորդ խմբի ներկայացուցիչները հավատում են Աստծուն, սակայն չեն հետևում իսլամական ծիսակարգին, այսինքն՝ աղոթում կամ մզկիթ են հաճախում ըստ հայեցողության:

Երրորդ խմբի ներկայացուցիչները հավատում են Աստծուն, սակայն նրանց մոտ կրոնական ինքնությունն ազգային ինքնության մի բաղադրիչն է և ստորադաս է դրան:

Չորրորդ խմբում աշխարհիկ ուղղության ներկայացուցիչներն են:

Իսլամական համայնքները Վրաստանի իշխանությունների համար լուրջ մարտահրավեր են: Նրանցից յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ խնդիրներ ու հավակնություններ: Այս առումով ուշադրության է արժանի թուրք մսխեթցիների հարցը: Դեռևս 1944-ին Ստալինի հրամանով նրանց մի մասն արտաքսվեց Կենտրոնական Ասիա: Սակայն ներկայումս նրանք ցանկություն ունեն Վրաստան վերադառնալ: 1999թ. Եվրախորհուրդը Վրաստանի իշխանություններից պահանջեց կազմակերպել նրանց հայրենադարձությունը: 2006-ի հունվարին Վրաստանի իշխանությունները հայտարարեցին, որ մինչև 2011թ. կիրականացնեն այդ ծրագիրը: 2006-ի հունվարին պետական նախարար Խայինդրավան հանդիպեց Ադրբեջանում գտնվող 70 հազ. թուրք մսխեթցիների ղեկավարների հետ: Ջավախահայերը դեմ են, որպեսզի նրանք բնակեցվեն Վրաստանի և Թուրքիայի սահմանագլխին:

Ինչ վերաբերում է ադրբեջանական համայնքին, ապա այն Վրաստանի ամենամեծ մահմեդական համայնքն է, հաշվվում է մոտ կես միլիոն, ադրբեջանցիները հիմնականում բնակվում են Լուվեր Քարթլիում և Կախեթում: Պատահական չէ, որ Էրզրումի հանդիպումը կազմակերպել էր Վրաստանում ադրբեջանական ազգային խորհուրդը: Հատկանշական է, որ Վրաստանում ապրող ադրբեջանցիներին չեն զոհացնում մի շարք հարցեր: Դրանցից մեկը կապված է հողի սեփականաշնորհման գործընթացից նրանց դուրս մնալու հետ: Հայտնի է, որ նրանք հիմնականում ընդգրկված են գյուղատնտեսության և գյուղատնտեսական ապրանքների վաճառքի մեջ: Նրանք հույս ունեին, որ Սահակաշվիլին կիրականացնի իրենց ցանկությունը՝ հողի սեփականաշնորհման հետ կապված, սակայն դա չիրականացավ: 2005թ. բավական թվով ադրբեջանցիներ են մահացել վրացի հողատերերի հետ ունեցած բախումների արդյունքում: Չնայած առկա խնդիրներին՝ ադրբեջանցիները համարվում են ամենավստահելի և վերահսկելի համայնքը: Հիմնական պատճառը Վրաստանի և Ադրբեջանի միջև առկա համագործակցությունն է, ինչն ամրագրված է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի և Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի ծրագրերով:

Վրաստանի իշխանությունների համար մտահոգիչ է նաև չեչենական գործոնը: Գաղտնիք չէ, որ Վրաստանի ճանապարհով Չեչնիա են տեղափոխվել իսլամ գրոհայիններ, զենք և զինամթերք: Չեչենական գործոնը լուրջ լարվածություն է ստեղծել Վրաստանի և Ռուսաստանի միջև հարաբերություններում:

Այսպիսով՝

1. Չնայած Էրզրումի հանդիպման մասնակիցներն իրենց ընդունած վերջնական կոմյունիկեում նշեցին, որ իրենց գործողությունները միտված են Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանմանն ու խաղաղությանը, Վրաստանի Իսլամական դեմոկրատական կուսակցության ստեղծումը վկայում է այս երկրում իսլամի քաղաքականացման և իսլամական գործոնի հնարավոր ակտիվացման մասին:

2. Վրաստանում իսլամական գործոնի ակտիվացմամբ կարող են հետաքրքրված լինել Ռուսաստանը, ինչպես նաև Թուրքիան և Ադրբեջանը:

3. Իսլամական գործոնի ակտիվացումը կասեցնելու հարցում Վրաստանի և Հայաստանի շահերը նույնական են:

*Արաքս Փաշայան  
«Նորավանք» հիմնադրամ*



# ՀԱՅՈՑ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

## Ֆրանսիա

Երկրի բարձրագույն ղեկավարությունը, պետական զանազան մարմինների ներկայացուցիչներն արտասահմանյան գործընկերների հետ քննարկում են տարաբնույթ խնդիրներ, որոնց շրջանակում առաջնային տեղ են գրավում տնտեսական համագործակցության հարցերը: Պետք է հաշվի առնել, որ ներկայիս գրեթե բոլոր սփյուռքահայ գաղթօջախներն ի սկզբանե եղել են առևտրատնտեսական համայնքներ, այսինքն՝ մեր ժողովրդի ներկայությունն այս կամ այն երկրում, նախ, եղել է վաճառականական, որին հաջորդել են հոգևոր, մշակութային, կրթական և այլ գործունեքը: Մեր ժողովուրդը ժամանակակից աշխարհի շուրջ 100 երկրներում ունի տնտեսական գործունեության վիթխարի ժառանգություն, ձևավորել է կապիտալի բազմադարյա մշակույթ:

Ելնելով այս իրողությունից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական համագործակցության ծիրում խիստ հարգի է ավանդությունների առկայությունը, այսուհետ կներկայացնենք համառոտ տեղեկանքներ այս կամ այն երկրում հայոց առևտրատնտեսական բացառիկ գործունեության վերաբերյալ:

Շարքն սկսում ենք Ֆրանսիայից՝ նկատի ունենալով այդ երկրում Հայաստանի տարվա անցկացումը:

Հայ վաճառականները Ֆրանսիա են եկել 6-7-րդ դարերում, իսկ անվանապես հայտնի առաջին հայը եղել է Անտիոքի Սիմոն եպիսկոպոսը, որը 591թ. հաստատվել է Տուր քաղաքում:

Հայ-ֆրանսիական առևտրատնտեսական փոխհարաբերությունների «պաշտոնական մեկնարկն» սկսվում է 11-րդ դ., երբ Երուսաղեմ արշավող խաչակիրների կազմում գտնվող ֆրանսիացիները մուտք են գործում Կիլիկիո հայոց թագավորություն: Այդ ժամանակվանից հայոց լեզվում սկսում է գործածվել «փրանկ» (ֆրանկ, ֆրանսիացի) բառը:

Ֆրանսիացի վաճառականները Կիլիկիա են բերում չիյուսված նավաճուպան, ածելի, փարիզյան գոտի, դանակ, հայելի, օճառ, մեղրամոմ և այլ ապրանքներ, իսկ կիլիկեցիները Գաղիա (Ֆրանսիա) էին արտահանում մետաքս, բամբակ, համեմունքներ, ինչպես նաև գորգ ու կարպետ, ինչի հետևանքով ֆրանսերենում ու եվրոպական այլ լեզուներում հայտնվեց և առ այսօր գործածվում է *carpette* բառը:

Տնտեսական փոխհարաբերություններն այնքան զարգացան, որ 13-րդ դ. հայ վաճառականները առևտրատնտեսական փոքրիկ համայնքներ հիմնեցին Ֆրանսիայի հարավում՝ Պրովանս ու Լանգեդոկ նահանգների Մարսել, Մոնպելյե, Նարբոն, Նիմ քաղաքներում: Ուշագրավ է, որ 12-14-րդ դդ. Մոնպելյեի համալսարանի դռանը փակցվում էին կիլիկյան ու ֆրանսիական դրամների փոխարժեքների սակացանկերը:

Հարկ է նշել, որ հայերի ու ֆրանսիացիների միջև ի սկզբանե հաստատվեցին փոխադարձ հարգալից վերաբերմունք և համակրանք: Դրա վկայությունն այն է, որ իրենց հրովարտակներով Կիլիկիայի Օշին թագավորը (1314թ.) և Լևոն Ե արքան (1321թ.) արտոնություններ շնորհեցին ֆրանսիացի վաճառականներին: Այսպես, Մոնպելյեի վաճառականները Այասի բաժտանը (մաքսատուն) վճարում էին 2% մաքսատուրք, այնինչ այլազգիները՝ 4%:

16-րդ դարավերջից Եվրոպայի տնտեսական «նվաճումը» ստանձնեց հայոց դասական ազգային կապիտալի «առաջապահ ջոկատը»՝ Ջուղան: Ֆրանսիայի «յուրացումն» սկսվեց Մարսելից. 17-րդ դարասկզբի առաջին տասնամյակներից նորջողայեցիներն այդ նավահանգիստ էին ներմուծում հում մետաքս, մետաքսե ասեղնագործ թաշկինակներ, շապիկներ, ծածկոցներ, ոսկեթել և արծաթաթել մետաքսե ու բամբակե կերպասներ, գույնզգույն կաշիներ:

Ընդ որում՝ այդ ապրանքատեսակները տեղական արտադրանքին զգալիորեն գերազանցում էին ոչ միայն որակական հատկանիշներով, այլև վաճառվում էին շատ ավելի ցածր գներով, ինչի հետևանքով ֆրանսիացի վաճառականները դուրս մղվեցին Մարսելի շուկայից:

1625թ. ֆրանսահպատակություն ընդունեց առաջին հայը՝ վաճառական Անտոնը: Այս դարի 70-ական թթ. Մարսելում բնակություն հաստատեցին 8 խոշոր վաճառականներ, որոնց ղեկավարն էր Մելքոն Նազարը:

Մարսելում հայ վաճառականները համախումբ բնակվում էին Հայոց փողոցում (*Rue des Arméniens*) և Վաճառականական սակարանի (*Bours de Commerce*) հետնամասում գտնվող մի փողոցում, որը կոչվում էր Հայաստանի աղբյուր (*Fontaine d'Arménie*)՝ ի պատիվ նույնանուն աղբյուրի, որի վրա պարզորոշ կարդացվում էր կառուցման թվականը՝ 1786:

Հարկ է նշել, որ 17-րդ դ. ֆրանսիական բարձրագույն իշխանությունները՝ ի դեմս թագավորական խորհրդի ղեկավար Ռիշելյեի, կարդինալ, առաջին նախարար Մազարինիի և ֆինանսների նախարար Կոլբերի, ըստ ամենայնի աջակցում էին հայ վաճառականներին՝ նրանց համարելով լավագույն կամուրջ Արևելքի ու Ֆրանսիայի միջև: Պատահական չէ, որ 17-18-րդ դդ. ֆրանսիացիներն Արևելքի բոլոր քրիստոնյաներին անվանում էին հայ:

Ֆրանսիայում սուրճ գործածելու մշակույթը սերմանել և սրճարանային բիզնեսը հիմնել են հայերը: 1672թ. Փարիզ է գալիս վաճառական *Հարությունը* (Պասկալ) և սուրճի խանութ բացում Սեն Ժերմեն հրապարակի մոտ, ապա էքոլ առափնյակում՝ դր լա Մոնե փողոցի անկյունում հիմնում է *Եվրոպայի առաջին սրճարանը*:

Հարությունից երեք-չորս տարի անց մեկ ուրիշ հայ՝ վաճառական *Մալիբանը*, սրճարան է բացում դը Բրյուսի փողոցում՝ Սեն Ժերմեն աբբայության հարևանությամբ, բայց ստիպված լինելով մեկնել՝ այն հանձնում է գործընկերոջը՝ նորջուղայեցի *Գրիգորին*: Վերջինս հմտանալով գործի մեջ՝ սրճարան է բացում Կարդինալ Մազարեն փողոցում, ապա այն վաճառում է իր համերկրացի *Մակարին*, իսկ ինքը 1688-ին նոր սրճարան է հիմնում Ֆոսե-Սեն-Ժերմեն դե Պրե փողոցում (հետագայում վերանվանվել է լ'Անսիեն Կոմեդի): Մեր ունեցած տեղեկություններով այս սրճարանը՝ «*Procopé*» անվամբ, գոյությունը պահպանել է մինչև 20-րդ դ. 30-ական թթ. և հանդիսանում էր փարիզահայերի սիրված հավաքատեղիներից մեկը: Այս սրճարանում է առաջին անգամ վաճառվել պաղպաղակ:

1712թ. Մարսելում սրճարան է բացում *Հովհաննեսը*: Նույն թվականին Փարիզի Նոտր Դամ կամրջի ստորին մասում սրճարան է հիմնում *Հովսեփը*: Նրան հաջորդում է հալեպցի *Ստեփանը*, որի սրճարանը Սենտ-Անդրե դեզ Առ փողոցում՝ Սեն-Միշել կամրջի դիմաց, 18-րդ դ. առաջին տասնամյակներում Փարիզի ամենանշանավորներից էր՝ առաջինը հայելագարդ պատերով ու մարմարյա սեղաններով:

Ահա այս ամենից հետո ֆրանսիացիներն իրենք էլ ներքաշվեցին սրճարանային գործի մեջ, և 18-րդ դ. վերջին Փարիզում արդեն գործում էր 900 սրճարան:

Տնտեսական գործունեության արդյունավետությունը, ֆրանսիական իշխանությունների բարեհաճ վերաբերմունքը հնարավորություն ընձեռեցին, որպեսզի երթևեկ հայ վաճառականներն աստիճանաբար մշտական բնակություն հաստատեն Ֆրանսիայում: Նրանց թվաքանակը Փարիզում այնքան ակնառու էր, որ 1854թ. Նապոլեոն III կայսրը թույլ տվեց մատուռ ունենալ: Իսկ արդեն 1904թ. ակնավոր նավթարդյունաբերող և բանկատեր Ալ.Մանթաշյանցը մայրաքաղաքի Ժան Գուժոն փողոցի թիվ 15 հասցեում 1 մլն 540 հազ. ֆրանկ գումարով կառուցեց Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, ինչի համար ֆրանսիական կառավարության կողմից պարգևատրվեց Պատվո լեգեոնի շքանշանով:

Հետաքրքրական է ֆրանսահայության տնտեսական ընդհանուր բնութագիրը: Եթե 1877թ. ընդամենը 20 հայ էր բնակվում *Մարսելում*, ապա 1882թ. նրանց թիվը հասավ 100-ի, ընդ որում՝ բոլորն անխտիր վաճառականներ էին. արևելահայերը (ռուսահայեր) զբաղվում էին բրդի, շերամի, իսկ արևմտահայերը՝ կաշվեղենի, բամբակի, ընդեղենի, չամիչի և այլ ապրանքների ներմուծմամբ: 1914թ. արդեն կար 15-20 մշտաբնակ մեծահարուստ հայ և 200-250 մանրավաճառ ու արհեստավոր:

Առաջին աշխարհամարտը, Հայոց ցեղասպանությունը և սոխպողական արտագաղթը, Ռուսաստանի բոլշևիկյան հեղափոխությունը հիմնովին ձևափոխեցին ֆրանսահայության

առևտրատնտեսական համայնքների կառուցվածքը և դրանք վերածեցին գաղթավայրերի: Այսպես, *Հինում* 1925թ. ապաստան գտավ 3 հազ. հայ, նրանք հաց էին վաստակում տեղի ավտոգործարանում աշխատելով, իսկ *Մարտելում*՝ 20 հազ. հոգի:

*Փարիզում* հանգրվանեց ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ խոշոր կապիտալը: 1925թ. այստեղ բիզնեսով էր զբաղվում 249 հայ, որից 66-ը ակնավաճառներ էին (Ա.Համբարձումյան, Խ.Ներսեսյան և այլք), 7-ը՝ ակնատաշներ (Ա.Էզնայան), 7-ը՝ նավթարդյունաբերողներ (Ստ.Լիանոսյան, Լ.Մանթաշյանց, Պ. և Ա. Ղուկասյան եղբայրներ, Ա.Վաչյանց), 13-ը՝ ռեստորանատերեր, 15-ը՝ անտիկ իրերի վաճառականներ (Տ.Քելեկյան), 24-ը՝ գործարանատերեր, 27-ը՝ գորգավաճառներ, իսկ 91-ը ընդգրկված էր բիզնեսի ամենատարբեր ոլորտներում: Բացի այդ, հայերին էր պատկանում 5 բանկ:

Համայնքում բացարձակ հեղինակություն էր վայելում խոշոր կապիտալիստ, ազգային բարերար, համազգային քաղաքական կառույցի՝ Ազգային պատվիրակության ղեկավար, ՀԲԸՄ ցկյանս նախագահ Պողոս Նուբար փաշան:

*Խաչատուր Դադայան*  
*«Նորավանք» հիմնադրամ*